# «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ

## Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ

*2015 թվականի սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների համար*

# Բովանդակություն

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն........ 1
Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն ........ 2
Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն ........ 3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն........ 4

## Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ներածություն........ 5
2. Պատրաստման հիմունքներ ........ 6
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ ........ 7
4. Զուտ տոկոսային եկամուտ........ 17
5. Միջնորդավճարների գծով եկամուտ ........ 18
6. Միջնորդավճարների գծով ծախս ........ 18
7. Արտարժութային գործառնություններից զուտ օգուտ........ 18
8. Այլ գործառնական ծախսեր ........ 18
9. Արժեզրկումից կորուստներ........ 19
10. Այլ ընդհանուր վարչական ծախսեր ........ 19
11. Շահութահարկի գծով (ծախս) / փոխհատուցում ........ 19
12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ........ 21
13. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ........ 22
14. Պահանջներ բանկերի նկատմամբ........ 23
15. Հաճախորդներին տրված վարկեր ........ 24
16. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ ........ 31
17. Այլ ակտիվներ ........ 32
18. Բանկերի ավանդներ և մնացորդներ ........ 32
19. Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ........ 32
20. Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ........ 33
21. Այլ ներգրավված միջոցներ ........ 34
22. Այլ պարտավորություններ........ 34
23. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ ........ 34
24. Ռիսկերի կառավարում ........ 35
25. Կապիտալի կառավարում........ 46
26. Վարկային պարտավորվածություններ ........ 46
27. Պայմանական պարտավորվածություններ........ 47
28. Գործարքներ կապակցված կողմերի հետ........ 48
29. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում ........ 50

# Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն 2015 թվականի սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների համար

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Ծան.* | *Հուլիսի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հունվարի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հուլիսի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* | *Հունվարի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* |
|---|---|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտ | 4 | 744,678 | 2,467,556 | 794,188 | 2,397,208 |
| Տոկոսային ծախս | 4 | (642,562) | (2,103,526) | (576,822) | (1,610,644) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | | **102,116** | **364,030** | **217,366** | **786,564** |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 5 | 27,555 | 71,813 | 25,136 | 66,701 |
| Միջնորդավճարների գծով ծախս | 6 | (14,370) | (35,673) | (12,679) | (34,583) |
| **Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ** | | **13,185** | **36,140** | **12,457** | **32,118** |
| Արտարժութային գործառնություններից զուտ օգուտ | 7 | 28,297 | 35,304 | 7,117 | 14,998 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ | | - | 5,927 | 40,593 | 48,747 |
| Այլ գործառնական ծախսեր | 8 | (4,666) | (40,236) | (22,075) | (31,171) |
| **Գործառնական եկամուտ** | | **138,932** | **401,165** | **255,458** | **851,256** |
| Արժեզրկումից կորուստներ | 9 | (199,823) | (730,212) | (67,465) | (174,032) |
| Անձնակազմի գծով ծախսեր | | (223,758) | (565,121) | (166,071) | (516,988) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | 10 | (161,999) | (431,422) | (117,431) | (380,613) |
| **Վնաս մինչև շահութահարկ** | | **(446,648)** | **(1,325,590)** | **(95,509)** | **(220,377)** |
| Շահութահարկի գծով (ծախս) / փոխհատուցում | 11 | (74,748) | 58,082 | (72,851) | (182,031) |
| **Հաշվետու ժամանակաշրջանի վնաս** | | **(521,396)** | **(1,267,508)** | **(168,360)** | **(402,408)** |
| | | | | | |
| **Այլ համապարփակ վնաս հարկումից հետո** | | | | | |
| *Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ* | | | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ | | | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից չիրացված (վնաս) / եկամուտ | | (39,067) | (247,368) | 653 | 44,099 |
| Որպես շահույթ կամ վնաս վերադասակարգված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից իրացված եկամուտ | | - | (5,927) | (40,593) | (48,747) |
| Շահութահարկի ազդեցություն | 11 | 7,814 | 50,659 | 7,988 | 929 |
| **Այլ համապարփակ վնաս հարկումից հետո** | | **(31,253)** | **(202,636)** | **(31,952)** | **(3,719)** |
| **Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ վնաս** | | **(552,649)** | **(1,470,144)** | **(200,312)** | **(406,127)** |

1-ից 52-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները վավերացվել են ղեկավարության կողմից 2015թ. հոկտեմբերի 14-ին և ստորագրվել վերջինիս անունից՝

Գլխավոր գործադիր տնօրենի ժ/պ — Հայկ Ստեփանյան

Ֆինանսների և վարչարարության գլխավոր վարչության պետ — Մանանա Թարփոշյան

*Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվությունը պետք է ընթերցվի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:*

# Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն
## 2015 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Ծան.* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 12 | 11,759,692 | 4,244,173 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 13 | | |
| - Բանկի կողմից պահվող | | 2,586,723 | 62,887 |
| - Հետգնման պայմանագրերով գրավադրված | | 1,436,272 | 3,118,896 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 14 | 4,440,677 | 15,934,007 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 15 | 19,894,935 | 28,434,633 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 16 | 1,033,785 | 1,031,801 |
| Այլ ակտիվներ | 17 | 1,567,215 | 460,760 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 11 | 105,517 | - |
| **Ընդամենն ակտիվներ** | | **42,824,816** | **53,287,157** |
| **Պարտավորություններ** | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 18 | 636,671 | 5,139,212 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 19 | 1,400,399 | 3,057,139 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 20 | 29,669,906 | 33,837,588 |
| Այլ ներգրաված միջոցներ | 21 | 2,317,371 | 3,348,533 |
| Ստորադաս փոխառություն մայր ընկերությունից | | 2,370,585 | - |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 11 | - | 10,548 |
| Այլ պարտավորություններ | 22 | 152,715 | 146,824 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **36,547,647** | **45,539,844** |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Կանոնադրական կապիտալ | 23 | 8,125,100 | 8,125,100 |
| Էմիսիոն եկամուտ | | 257,149 | 257,149 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ | | (86,744) | 115,892 |
| Կուտակված վնաս | | (2,018,336) | (750,828) |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **6,277,169** | **7,747,313** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | | **42,824,816** | **53,287,157** |

*Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվությունը պետք է ընթերցվի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:*

# Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն 2015 թվականի սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների համար

*(հազար ՀՀ դրամ)*

| | Ծան. | Հունվարի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ. | Հունվարի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ. |
|---|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | | |
| Ստացված տոկոսներ | | 2,407,547 | 2,318,770 |
| Վճարված տոկոսներ | | (2,391,420) | (1,520,361) |
| Ստացված միջնորդավճարներ | | 71,525 | 67,749 |
| Վճարված միջնորդավճարներ | | (35,645) | (34,672) |
| Զուտ մուտքեր վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից | | 5,927 | 48,190 |
| Զուտ մուտքեր արտարժութային գործառնություններից | | 98,880 | 41,937 |
| Վճարված հարկեր (բացառությամբ շահութահարկի) | | (7,997) | (5,401) |
| Անձնակազմի գծով վճարված աշխատավարձ և այլ ծախսեր | | (583,748) | (513,517) |
| Վճարված այլ ընդհանուր վարչական ծախսեր | | (396,545) | (296,650) |
| Այլ գործառնական ծախսեր | | (50,642) | (15,257) |
| *Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/նվազում* | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | | (991,740) | 202,835 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | | 11,554,018 | 745,430 |
| Հաճախորդներին տրված վարկեր | | 7,799,339 | (1,522,376) |
| Այլ ակտիվներ | | (1,098,425) | 132,314 |
| *Գործառնական պարտավորությունների զուտ ավելացում/(նվազում)* | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | | (4,534,616) | 1,276,117 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | | (1,653,802) | (750,000) |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | (3,828,072) | 5,639,991 |
| Այլ ներգրավված միջոցների մարումներ | | (1,006,001) | (2,256,904) |
| Այլ պարտավորություններ | | 50,283 | (8,146) |
| **Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը** | | **5,408,866** | **3,550,049** |
| Վճարված շահութահարկ | | (19,875) | (45,280) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված գործառնական գործունեությունում** | | **5,388,991** | **3,504,769** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների զուտ ձեռքբերում | | (21,521) | (81,406) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում** | | **(21,521)** | **(81,406)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից** | | | |
| Ստորադաս փոխառություն մայր ընկերությունից | | 2,382,100 | - |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից** | | **2,382,100** | **-** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ** | | **7,749,570** | **3,423,363** |
| Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (234,038) | (124,955) |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի սկզբում** | | 4,244,157 | 8,327,792 |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի վերջում** | 12 | **11,759,689** | **11,626,200** |

*Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվությունը պետք է ընթերցվի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:*

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն 2015 թվականի սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների համար

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Կանոնադրա-կան կապիտալ* | *Էմիսիոն եկամուտ* | *Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատ-ման պահուստ* | *Չբաշխված շահույթ/ (Կուտակված վնաս)* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|
| **Մնացորդն առ 2014թ. հունվարի 1** | **8,125,100** | **257,149** | **241,267** | **355,659** | **8,979,175** |
| **Ընդամենը համապարփակ վնաս** | | | | | |
| Հաշվետու ժամանակաշրջանի վնաս | – | – | – | (402,408) | (402,408) |
| **Այլ համապարփակ վնաս** | | | | | |
| *Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ* | | | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություններ՝ առանց հետաձգված հարկի | – | – | 35,279 | – | 35,279 |
| Որպես շահույթ կամ վնաս վերադասակարգված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություններ՝ առանց հետաձգված հարկի | – | – | (38,998) | – | (38,998) |
| **Ընդամենն այլ համապարփակ վնաս** | **–** | **–** | **(3,719)** | **-** | **(3,719)** |
| **Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ վնաս** | **–** | **–** | **(3,719)** | **(402,408)** | **(406,127)** |
| **Մնացորդը 2014թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ** | **8,125,100** | **257,149** | **237,548** | **(46,749)** | **8,573,048** |
| | | | | | |
| **Մնացորդն առ 2015թ. հունվարի 1** | **8,125,100** | **257,149** | **115,892** | **(750,828)** | **7,747,313** |
| **Ընդամենը համապարփակ վնաս** | | | | | |
| Հաշվետու ժամանակաշրջանի վնաս | – | – | – | (1,267,508) | (1,267,508) |
| **Այլ համապարփակ վնաս** | | | | | |
| *Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ* | | | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություններ՝ առանց հետաձգված հարկի | – | – | (197,894) | – | (197,894) |
| Որպես շահույթ կամ վնաս վերադասակարգված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություններ՝ առանց հետաձգված հարկի | – | – | (4,742) | – | (4,742) |
| **Ընդամենն այլ համապարփակ վնաս** | **–** | **–** | **(202,636)** | **–** | **(202,636)** |
| **Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ վնաս** | **–** | **–** | **(202,636)** | **(1,267,508)** | **(1,470,144)** |
| **Մնացորդը 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ** | **8,125,100** | **257,149** | **(86,744)** | **(2,018,336)** | **6,277,169** |

*Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվությունը պետք է ընթերցվի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:*

# 1. Ներածություն

## (ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ն («Բանկ») հիմնադրվել է 2007թ. համաձայն ՀՀ օրենսդրության:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների իրականացումը, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և Հայաստանի Հանրապետության ավանդների երաշխավորման համակարգի անդամ է:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Ամիրյան փ. 18/3: Բանկն ունի չորս մասնաճյուղ:

Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում:

## (I) Բաժնետերեր

2007թ. օգոստոսին «Բիբլոս Բանկ Էս-Էյ-Էլ»-ը ձեռք բերեց ««ԻԹԲ» Միջազգային Առևտրային Բանկ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100%-ը, և Բանկը վերանվանվեց «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ի:

2008թ. ընթացքում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը և Նավթ Արտահանող Երկրների Կազմակերպության Միջազգային Զարգացման Հիմնադրամը ձեռք բերեցին «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ի սովորական բաժնետոմսերի համապատասխանաբար 25%-ը և 10%-ը: Ստորև ներկայացված է Բանկի բաժնետերերի ներկայիս կազմը.

«Բիբլոս Բանկ Էս-Էյ-Էլ» – 65%
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ – 25%
Նավթ Արտահանող Երկրների Կազմակերպության Միջազգային Զարգացման Հիմնադրամ – 10%

Բանկի վերջնական վերահսկող անձը Ֆրանսուա Բասիլն է:

## (բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու վերահսկողական հայեցակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը մեծապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

2014թ.-ին Հայաստանի տնտեսության վրա բացասական ազդեցություն ունեցավ հայկական դրամի զգալի արժեզրկումը, ինչը հանգեցրեց կապիտալի արժեքի բարձրացմանը, գնաճի և հետագա տնտեսական աճի նկատմամբ անորոշության ավելացմանը, ինչը կարող է բացասաբար ազդել Բանկի ապագա ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների և բիզնես հեռանկարների վրա:

Ղեկավարությունը կարծում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում գոյություն ունեցող պայմաններում Բանկի կայունության ապահովման համար:

## 2. Պատրաստման հիմունքներ

### (ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

### (բ) ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվի խախտում

2015թ. սեպտեմբերի 30-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը խախտել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը: Նորմատիվի արժեքը գրանցվել էր 23.3%՝ համեմատած թույլատրելի 20%-ի հետ (2014թ. 26.8%): Սույն ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթվի դրությամբ խախտումը վերացված չէր:

2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկի նորմատիվային կապիտալը կազմել է 8,103,158 հազ. ՀՀ դրամ (2014թ.՝ 7,062,528 հազ. ՀՀ դրամ)՝ պահանջվող 5,000,000 հազար ՀՀ դրամ նվազագույն չափի հետ համեմատ (2014թ.՝ 5,000,000 հազ. ՀՀ դրամ), և կապիտալի համարժեքության նորմատիվը եղել է 22.8% (2014թ.՝ 17.8%)՝ պահանջվող 12% նվազագույն չափի համեմատ (2014 թ.՝ 12%):

### (գ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիման վրա: Բացառություն են կազմում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

### (դ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է («ՀՀ դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է իրադարձությունների և դրանց առնչվող հանգամանքների տնտեսական էությունը:

ՀՀ դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: ՀՀ դրամը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս փոխարկելի արժույթ չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար ՀՀ դրամ, եթե այլ բան նշված չէ:

### (ե) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը պետք է կատարի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի գծով ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում՝

- վարկերի արժեզրկման գնահատում՝ Ծանոթագրություն 15
- արժեզրկված վարկերի գրավների իրական արժեքի գնահատում՝ Ծանոթագրություն 15 (գ)

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ

### (ա) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

### (բ) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները վերահաշվարկվում են Բանկի համապատասխան ֆունկցիոնալ արժույթի գործարքների կատարման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով փոխարժեքային օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը:
Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերահաշվարկի արդյունքում առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերահաշվարկման արդյունքում առաջացած տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված արտարժութային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս, կամ դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքներ որակված դրամային հոդվածների գծով փոխարժեքային տարբերությունների, որոնք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

### (գ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ներգրավված միջոցների դիմաց ՀՀ ԿԲ-ում տեղական արժույթով պահվող պարտադիր պահուստները, ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

### (դ) Ֆինանսական գործիքներ

#### *(i) Դասակարգում*

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափող ֆինանսական գործիքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն, որը՝

- ձեռք է բերվել կամ ստանձնվել է հիմնականում կարճ ժամանակամիջոցում վաճառելու կամ հետգնելու նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին որոշելի, միասին կառավարվող ֆինանսական գործիքների պորտֆելի մի մաս է, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու մոտ անցյալում տեղի ունեցած փաստացի դեպքերի վերաբերյալ, կամ
- ածանցյալ գործիք է (բացառությամբ այնպիսի ածանցյալ գործիքի, որը ֆինանսական երաշխավորության պայմանագիր է կամ նախատեսված է որպես արդյունավետ հեջավորման գործիք), կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ կազմակերպության կողմից նախատեսվել է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները կարող է նախատեսել որպես շահույթի կամ վնասի միջոցով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվների կամ պարտավորությունների ներքին կառավարումը, գնահատումը և ներկայացումն իրականացվում է իրական արժեքի հիմունքով,

- այն վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որը այլապես կառաջանար, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որն էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:
Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման ժամանակ: Ածանցյալ ֆինանսական գործիքները և իրական արժեքով՝շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները սկզբնական ճանաչումից հետո չեն վերադասակարգվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվները, որոնք համապատասխանում են վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող են վերադասակարգվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Բանկը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների դասից հազվագյուտ հանգամանքներում: Հազվագյուտ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն ակտիվների, որոնք Բանկը.

- մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսել է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- կարող է չփոխհատուցել ըստ էության ողջ իր սկզբնական ներդրումը այլ պատճառով, քան վարկային ռիսկի վատթարացումը:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Բանկը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ նրանց՝

- որոնց Բանկը սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, կամ
- որոնց Բանկը դասակարգում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք բավարարում են վարկերի կամ դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ, որոնք Բանկի կողմից նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի, կամ որոնք դասակարգված չեն որպես փոխառություններ ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

*(ii) Ճանաչում*

Բանկը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է, երբ դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները կամ վաճառքները հաշվառվում են գործարքի ամսաթվի դրությամբ:

*(iii) Չափում*

Ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվում է իրական արժեքով՝ գումարած՝ այն դեպքում, երբ դա իրական արժեքով՝շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ հանդիսացող ածանցյալ գործիքները, չափվում են իրենց իրական արժեքներով՝ առանց կատարելու որևէ նվազեցում գործարքի հետ կապված այն ծախսումների գծով, որոնք Բանկը կարող է կրել վաճառքի կամ այլ ձևով օտարման ժամանակ, բացառությամբ հետևյալ ֆինանսական ակտիվների՝

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքների մեջ ներդրումներ, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի որակվում որպես ապաճանաչման ենթակա:

*(iv) Ամորտիզացված արժեք*

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական ճանաչված գումարի և մարման գումարի միջև տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ հանած ֆինանսական ակտիվի արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

*(v) Իրական արժեքի չափման հիմունքներ*

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ, ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական կամ, դրա բացակայության դեպքում, ամենաբարենպաստ շուկայում կստացվեր շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:
Հնարավորության դեպքում, Բանկը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Բանկը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն վկայությունը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Բանկը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգմամբ: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ համապատասխան հիմունքով, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով, կամ երբ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Բանկը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Բանկը ճանաչում է ֆինանսական գործիքների իրական արժեքի մակարդակների փոփոխությունները այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում դրանք տեղի են ունեցել:

*(vi) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս*

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է կապիտալում՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի միջոցով:

*(vii) Ապաճանաչում*

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները, կամ որում Բանկը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Բանկի կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են կամ չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են:

Բանկը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու օգուտները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Բանկը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:
Բանկը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

*(viii) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր*

Հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է հետգնման գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում հետգնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ բանկերի նկատմամբ պահանջների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում հետգնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

*(ix) Ածանցյալ ֆինանսական գործիքներ*

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են սվոպերը, ֆորվարդները, ֆյուչերսները, տոկոսադրույքների, արտարժույթների փոխարժեքների, թանկարժեք մետաղների, բորսաներում շրջանառվող օպցիոնները, ինչպես նաև այս գործիքների ցանկացած համակցություն:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը կատարվում է ածանցյալ գործիքի պայմանագրի կնքման օրը գործող իրական արժեքով: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ՝ դրական իրական արժեքի դեպքում և որպես պարտավորություն՝ բացասական իրական արժեքի դեպքում:

Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Թեև Բանկն ածանցյալ գործիքների առք ու վաճառք իրականացնում է ռիսկի հեջավորման նպատակով, այս գործիքները չեն համապատասխանում հեջի հաշվառման պահանջներին:

*(x) Հաշվանցում*

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(ե) Հիմնական միջոցներ

*(i) Սեփական ակտիվներ*

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

*(ii) Մաշվածություն*

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողը չի մաշեցվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

| | |
|---|---|
| շենքեր | 50 տարի |
| համակարգիչներ և հեռահաղորդակցման սարքեր | 1-5 տարի |
| շինություն և սարքավորումներ | 5-10 տարի |
| փոխադրամիջոցներ | 5 տարի |

Վարձակալված միջոցների բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում:

## (զ) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի, լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի

ձեռքբերման և ներդրման գծով ծախսումներ:

Ամորտիզացիան ճանաչվում է որպես ծախս շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 1-ից 10 տարի:

## (է) Գրավի նկատմամբ սեփականության ձեռքբերման արդյունքում առաջացած ակտիվներ

Բանկը ճանաչում է գրավի նկատմամբ սեփականության ձեռքբերման արդյունքում առաջացած ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ ունի գրավի նկատմամբ ամբողջական և վերջնական իրավունքներ:

Գրավի նկատմամբ սեփականության ձեռքբերման արդյունքում առաջացած ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից նվազագույնով՝ հանած վաճառքի կազմակերպման ծախսերը: Սկզբնական ճանաչման պահին գրավի նկատմամբ սեփականության ձեռքբերման արդյունքում առաջացած ակտիվները չափվում են չաշխատող/դուրսգրված վարկի հաշվեկշռային արժեքով՝ ներառյալ գրավի բռնագանձման հետ կապված ծախսումները: Իրական արժեքի և վաճառքի կազմակերպման ծախսերի տարբերությունը հանդիսանում է գրավի գնահատված վաճառքի գինը բնականոն գործունեության ընթացքում՝ հանած վաճառքի հարակից ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո գրավի նկատմամբ սեփականության ձեռքբերման արդյունքում առաջացած ակտիվները վերանայվում են որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու տեսանկյունից և համապատասխանաբար վերադասակարգվում են այդ դասի չափանիշները բավարարելու դեպքում:

Գրավի նկատմամբ սեփականության ձեռքբերման արդյունքում առաջացած ակտիվները ներառվում են այլ ակտիվների կազմում:

Գրավի նկատմամբ սեփականության ձեռքբերման արդյունքում առաջացած ակտիվների օտարումից ստացվող օգուտը և վնասը ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ գործառնական եկամուտ» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

## (ը) Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը կարող է արժեզրկված լինել: Նման վկայության առկայության դեպքում, Բանկը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է որևէ հայտանիշ ֆինանսական ակտիվի արժեզրկման մասին, որը սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք (կորստի դեպք) է, և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Հնարավորության դեպքում Բանկը փորձում է իրականացնել վարկի պայմանների վերանայում, այլ ոչ գրավի բռնագանձում: Սա կարող է ներառել վճարումների երկարաձգում և պայմանագիր նոր վարկի պայմաններով:

Պայմանների այդպիսի վերանայման հաշվառումը հետևյալն է.

- Եթե վարկի արժույթը փոխվել է, ապա հին վարկն ապաճանաչվում է, և նոր վարկ է ճանաչվում,
- Եթե վարկի վերանայումը պայմանավորված չէ փոխառուի ֆինանսական դժվարություններով՝ Բանկն օգտագործում է նույն մոտեցումը, ինչ ֆինանսական պարտավորությունների համար.

- Եթե վարկի պայմանների վերանայումը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, և վարկն արժեզրկվել է վերանայումից հետո, ապա Բանկը նոր դրամական հոսքերի ներկա արժեքի՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և մինչև վարկի պայմանների վերանայումը հաշվեկշռային արժեքի տարբերությունը ճանաչում է որպես տվյալ ժամանակահատվածի արժեզրկումից կորուստ: Այն դեպքում, եթե վարկը չի արժեզրկվել վերանայումից հետո, ապա Բանկը վերահաշվարկում է արդյունավետ տոկոսադրույքը:

Երբ պայմանները վերանայվել են, վարկն այլևս չի համարվում ժամկետանց: Ղեկավարությունը շարունակաբար վերահսկում է վերանայված վարկերը՝ համոզվելու, որ բոլոր չափանիշները պահպանված են, և որ ապագա վճարումները, ամենայն հավանականությամբ, կիրականացվեն: Վարկերը շարունակում են լինել անհատական կամ խմբային արժեզրկման գնահատման առարկա՝ հաշվարկներում օգտագործելով վարկի սկզբնական կամ ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքը:

***(i)* Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ**

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը: Բանկը վերանայում է իր փոխառությունները և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Բանկը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Բանկը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա Բանկը ներառում է այդ վարկը կամ դեբիտորական պարտքը պարտքային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է օբյեկտիվ հայտանիշ, որ վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորուստ է տեղի ունեցել, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և ապագա գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն, ներառյալ սպասվող դրամական հոսքերը երաշխիքներից և գրավներից, զեղչված վարկի նախնական արդյունավետ տոկոսադրույքով: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ վարկառուն ֆինանսական դժվարությունների մեջ է և համանման վարկառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Բանկն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Փոխառության և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Բանկը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստները) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

***(ii) Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ***

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներում ընդգրկված չգնանշվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ դրանց արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվների ներկա շուկայական տոկոսադրույքով զեղչված

դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

*(iii) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ*

Վաճառքի համար մատչելի ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ եկամտից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու ամորտիզացիան և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթի կամ վնասի կազմում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն վերագրել շահույթի կամ վնասի կազմում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուհանդերձ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

*(i) Ոչ ֆինանսական ակտիվներ*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ նվազեցված վաճառքի ծախսերով, ու օգտագործման արժեքից առավելագույնի տարբերություն: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

## (թ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են՝ զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման՝ մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, կիրառելիության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

## (ժ) Վարկային պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանձն է առնում վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները, ակրեդիտիվները և երաշխիքները:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրերը իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել սահմանված վճարումներ, փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի պարտապանի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունն ի սկզբանե ճանաչվում է իրական արժեքով՝ հանած

գործարքի հետ կապված ծախսումները և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ ի սկզբանե ճանաչված գումարը հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխավորության գծով ցանկացած կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխավորության գծով կորուստների պահուստը և վարկային այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունները և վարկային այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վարկային պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկային պարտավորություններ, որոնք Բանկը դասակարգում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- եթե Բանկն ունի իր վարկային պարտավորություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին փորձ, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկային պարտավորությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,
- վարկային պարտավորություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորություններ:

## (ի) Բաժնետիրական կապիտալ

### *i. Սովորական բաժնետոմսեր*

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

### *ii. Էմիսիոն եկամուտ*

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող ցանկացած գումար ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

### *iii. Շահաբաժիններ*

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

## (լ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ հարկի այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միավորներին կամ ուղղակիորեն կապիտալում ճանաչված՝ բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ գուդվիլ, որը չի նվազեցվում հարկային նպատակներով, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում, որոնք ազդեցություն չունեն ոչ հաշվապահական, ոչ հարկվող

շահույթի վրա, ինչպես նաև այն դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող ժամանակավոր տարբերությունների գծով, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Բանկը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր հարկային տարբերությունները:

## (խ) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, միջնորդավճարների գծով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Շահաբաժինների տեսքով եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ շահաբաժնի հայտարարման ամսաթվին:

Գործառնական վարձակալության գծով կատարած վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանները ճանաչվում են որպես վարձակալության գծով ընդհանուր ծախսի անբաժան մաս վարձակալության ժամկետի ընթացքում:

## (ծ) Վարձակալություն

### Ֆինանսական վարձակալություն՝ Բանկը որպես վարձակալ

Բանկը ճանաչում է ֆինանսական վարձակալությունը որպես ակտիվներ և պարտավորություններ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից վարձակալվող գույքի իրական արժեքի չափով, կամ, ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքով: Նվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքը հաշվարկելու համար որպես զեղչման գործակից օգտագործվում է վարձակալության ներքին տոկոսադրույքը, երբ այն հնարավոր է կիրառել, հակառակ դեպքում՝ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ակտիվի արժեքի մեջ: Վարձակալական վճարները համաչափորեն բաշխվում են ֆինանսական ծախսերի և չմարված պարտավորության նվազեցման միջև: Ֆինանսական ծախսը տարաբժվում է վարձակալության ողջ ժամանակահատվածի վրա այնպես, որ հաշվարկվի հաստատուն դրույքաչափ պարտավորության յուրաքանչյուր ժամանակաշրջանի մնացորդային արժեքի նկատմամբ: Վարձակալի կողմից ֆինանսական վարձակալության գործունեությանը ուղղակիորեն վերագրելի ծախսումներն արտացոլվում են վարձակալված ակտիվների կազմում:

**Ֆինանսական վարձակալություն՝ Բանկը որպես վարձատու**

Բանկը ճանաչում է ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքը վարձակալության զուտ ներդրման գումարի չափով՝ վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից սկսած: Ֆինանսական եկամուտը հիմնված է զուտ չմարված ներդրման հաստատուն եկամտաբերության գործակցի օգտագործման մոդելի վրա: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են վարձակալությունից դեբիտորական պարտքի հաշվարկման մեջ:

**Գործառնական վարձակալություն՝ Բանկը որպես վարձակալ**

Ակտիվի վարձակալությունը, որի դեպքում սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով վարձավճարները հավասարաչափ ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

**Գործառնական վարձակալություն՝ Բանկը որպես վարձատու**

Բանկը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացնում է գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվը՝ ըստ ակտիվի բնույթի: Գործառնական վարձակալությունից ստացվող վարձակալական եկամուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում որպես այլ եկամուտ: Վարձակալներին տրամադրված զեղչերի համախառն գումարը արտացոլվում է որպես վարձակալությունից եկամտի նվազեցում՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության պայմանագրի հետ կապված սկզբնական ուղղակի ծախսումները ավելացվում են վարձակալության առարկա հանդիսացող ակտիվի հաշվեկշռային արժեքին:

## 4. Զուտ տոկոսային եկամուտ

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Հուլիսի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հունվարի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հուլիսի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* | *Հունվարի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* |
|---|---|---|---|---|
| **Տոկոսային եկամուտ** | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր | 533,479 | 1,816,661 | 607,297 | 1,795,043 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 107,132 | 331,630 | 114,464 | 347,388 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 92,727 | 307,845 | 72,100 | 252,238 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | - | - | - | 1,440 |
| Այլ | 11,340 | 11,420 | 327 | 1,099 |
| | **744,678** | **2,467,556** | **794,188** | **2,397,208** |
| **Տոկոսային ծախս** | | | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 447,324 | 1,350,733 | 432,731 | 1,180,750 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 77,157 | 323,164 | - | 2,083 |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 13,858 | 171,911 | 75,662 | 186,098 |
| Այլ ներգրավված միջոցներ | 47,017 | 161,606 | 68,429 | 241,713 |
| Ստորադաս փոխառություն մայր ընկերությունից | 57,206 | 94,931 | - | - |
| Այլ | - | 1,181 | - | - |
| | **642,562** | **2,103,526** | **576,822** | **1,610,644** |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **102,116** | **364,030** | **217,366** | **786,564** |

## 5. Միջնորդավճարների գծով եկամուտ

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Հուլիսի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հունվարի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հուլիսի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* | *Հունվարի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* |
|---|---|---|---|---|
| Հաշիվների սպասարկում | 7,423 | 20,294 | 6,673 | 18,251 |
| Պլաստիկ քարտերի սպասարկում | 7,933 | 19,149 | 5,513 | 15,745 |
| Դրամարկղային գործառնություններ | 5,829 | 14,272 | 7,634 | 16,564 |
| Դրամական փոխանցումներ | 4,152 | 11,459 | 4,261 | 11,895 |
| Այլ | 2,218 | 6,639 | 1,055 | 4,246 |
| | **27,555** | **71,813** | **25,136** | **66,701** |

## 6. Միջնորդավճարների գծով ծախս

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Հուլիսի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հունվարի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հուլիսի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* | *Հունվարի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* |
|---|---|---|---|---|
| Պլաստիկ քարտերի սպասարկում | 10,445 | 25,960 | 8,167 | 22,924 |
| Դրամական փոխանցումներ | 2,223 | 5,007 | 1,559 | 4,244 |
| Հարցումներ | 843 | 2,131 | 1,232 | 3,450 |
| Այլ | 859 | 2,575 | 1,721 | 3,965 |
| | **14,370** | **35,673** | **12,679** | **34,583** |

## 7. Արտարժութային գործառնություններից զուտ օգուտ

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Հուլիսի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հունվարի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հուլիսի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* | *Հունվարի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* |
|---|---|---|---|---|
| Սփոթ գործարքներից օգուտ | 6,641 | 39,009 | 11,900 | 41,937 |
| Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից օգուտ / (վնաս) | 21,656 | (3,705) | (4,783) | (26,939) |
| | **28,297** | **35,304** | **7,117** | **14,998** |

## 8. Այլ գործառնական ծախսեր

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Հուլիսի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հունվարի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հուլիսի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* | *Հունվարի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* |
|---|---|---|---|---|
| Ստացված տույժեր և տուգանքներ | 15,222 | 28,870 | 10,135 | 41,616 |
| Վճարումներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին | (13,720) | (41,276) | (11,535) | (32,877) |
| Վճարված տույժեր և տուգանքներ | (6,821) | (16,690) | (3,451) | (9,381) |
| Վճարումներ ֆինանսական համակարգի հաշտարարին | (1,327) | (3,981) | (1,072) | (3,216) |
| Այլ | 1,980 | (7,159) | (16,152) | (27,313) |
| | **(4,666)** | **(40,236)** | **(22,075)** | **(31,171)** |

## 9. Արժեզրկումից կորուստներ

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Հուլիսի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հունվարի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հուլիսի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* | *Հունվարի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* |
|---|---|---|---|---|
| Հաճախորդներին տրված վարկեր | 193,062 | 722,793 | 66,962 | 170,026 |
| Այլ ակտիվներ | 6,761 | 7,419 | 503 | 4,006 |
| | **199,823** | **730,212** | **67,465** | **174,032** |

Արժեզրկման գծով կորուստները բացահայտված են Ծանոթագրություն 15 և 17-ում:

## 10. Այլ ընդհանուր վարչական ծախսեր

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Հուլիսի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հունվարի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հուլիսի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* | *Հունվարի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* |
|---|---|---|---|---|
| Իրավաբանական ծառայություններ | 48,639 | 102,525 | 5,400 | 20,077 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 24,797 | 69,503 | 22,279 | 67,712 |
| Գովազդ և մարքեթինգ | 10,456 | 36,042 | 15,280 | 54,488 |
| Համակարգչային ծրագրերի սպասարկում | 12,021 | 34,582 | 11,358 | 33,428 |
| Վերանորոգման և պահպանման ծախսեր | 11,154 | 31,853 | 9,649 | 29,180 |
| Ապահովագրություն | 8,921 | 26,144 | 8,560 | 24,564 |
| Անվտանգության ծառայություն | 10,177 | 25,040 | 7,138 | 21,986 |
| Մասնագիտական ծառայություններ | 5,841 | 20,301 | 2,829 | 18,267 |
| Հարկեր (բացառությամբ շահութահարկի) | 6,143 | 15,818 | 5,866 | 14,338 |
| Կապի և տեղեկատվական ծառայություններ | 5,116 | 14,420 | 5,114 | 15,224 |
| Ավտոմեքենաների սպասարկման ծախսեր | 3,821 | 11,387 | 4,554 | 13,094 |
| Գործառնական վարձակալության գծով ծախսեր | 3,313 | 9,939 | 3,313 | 9,939 |
| Գրասենյակային ծախսեր | 2,962 | 7,083 | 1,279 | 5,173 |
| Անդամակցության ծախսեր | 1,911 | 5,661 | 1,875 | 5,685 |
| Գործուղման ծախսեր | 88 | 2,630 | 419 | 5,772 |
| Վերապատրաստման գծով ծախսեր | 18 | 2,486 | 872 | 4,536 |
| Այլ | 6,621 | 16,008 | 2,802 | 10,618 |
| Ռոյալթի | - | - | 8,844 | 26,532 |
| | **161,999** | **431,422** | **117,431** | **380,613** |

## 11. Շահութահարկի գծով (ծախս) / փոխհատուցում

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Հուլիսի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հունվարի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հուլիսի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* | *Հունվարի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* |
|---|---|---|---|---|
| Ընթացիկ շահութահարկի գծով ծախս | - | (7,324) | - | - |
| Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման հետևանքով | (74,748) | 65,406 | (72,851) | (182,031) |
| **Ընդամենը շահութահարկի (ծախս) / փոխհատուցում** | **(74,748)** | **58,082** | **(72,851)** | **(182,031)** |

2015թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2014թ.-ին՝ 20%):

**Արդյունավետ հարկային դրույքի համադրում**

| | *Հունվարի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *%* | *Հունվարի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* | *%* |
|---|---|---|---|---|
| Վնաս նախքան հարկումը | (1,325,590) | | (220,377) | |
| Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով | 265,118 | (20%) | 44,075 | (20%) |
| Չնվազեցվող ծախսեր | (207,036) | 16% | (226,106) | 103% |
| Չճանաչված հետաձգված հարկային ակտիվներ | - | - | - | - |
| | **58,082** | **(4%)** | **(182,031)** | **83%** |

*(ա) Հետաձգված հարկային ակտիվ / (պարտավորություն)*

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ համապատասխանաբար 2015թ. սեպտեմբերի 30-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Համաձայն գործող օրենսդրության այս նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գործողության ժամկետը սահմանափակ չէ, բացառությամբ հարկային վնասի, որը կարող է տեղափոխվել վնասի առաջացմանը հաջորդող 5 տարիներ:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2015թ. և 2014թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների ընթացքում:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Մնացորդը 2015թ. Հունվարի 1-ի դրությամբ* | *Շահույթում կամ վնասում ճանաչված* | *Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված* | *Մնացորդը 2015թ. Սեպտեմբերի 30-ի դրությամբ* |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | (867) | (1,259) | – | (2,126) |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | (28,972) | – | 50,659 | 21,687 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | (18,670) | 9,833 | – | (8,837) |
| Հաճախորդներին տրված վարկեր | (82,409) | 172,611 | – | 90,202 |
| Հիմնական միջոցներ | 2,352 | 635 | – | 2,987 |
| Այլ ակտիվներ | 1,302 | 2,061 | – | 3,363 |
| Հարկային վնասներ | 338,103 | (338,103) | – | – |
| Այլ պարտավորություններ | (1,415) | (344) | – | (1,759) |
| **Համախառն հետաձգված հարկային ակտիվ** | **209,424** | **(154,566)** | **50,659** | **105,517** |
| **Չճանաչված հետաձգված հարկային ակտիվ** | (219,972) | 219,972 | – | – |
| Հետաձգված հարկային (պարտավորություն) / ակտիվ | **(10,548)** | **65,406** | **50,659** | **105,517** |

| *(հազար ՀՀ դրամ)* | *Մնացորդը 2014թ. Հունվարի 1-ի դրությամբ* | *Շահույթում կամ վնասում ճանաչված* | *Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված* | *Մնացորդը 2014թ. Սեպտեմբերի 30-ի դրությամբ* |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | (1,373) | (200) | – | (1,573) |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | (60,316) | – | 929 | (59,387) |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | (9,940) | 1,296 | – | (8,644) |
| Հաճախորդներին տրված վարկեր | 43,002 | (253,145) | – | (210,143) |
| Հիմնական միջոցներ | 1,504 | 636 | – | 2,140 |
| Այլ ակտիվներ | 987 | 347 | – | 1,334 |
| Հարկային վնասներ | – | 69,302 | | 69,302 |
| Այլ պարտավորություններ | (389) | (267) | – | (656) |
| Հետաձգված հարկային պարտավորություն | **(26,525)** | **(182,031)** | **929** | **(207,627)** |

*(բ) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված շահութահարկ*

Ստորև ներկայացված են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի բաղադրիչներին վերաբերող հարկային հետևանքները 2015թ. և 2014թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների համար:

| | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | | | *Սեպտեմբերի 30, 2014թ.* | | |
|---|---|---|---|---|---|---|
| *(հազար ՀՀ դրամ)* | *Գումարը նախքան հարկումը* | *Հարկի գծով ծախս* | *Գումարը հարկումից հետո* | *Գումարը նախքան հարկումը* | *Հարկի գծով ծախս* | *Գումարը հարկումից հետո* |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություններ | (247,368) | 49,474 | (197,894) | 44,099 | (8,820) | 35,279 |
| Որպես շահույթ կամ վնաս վերադասակարգված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություններ | (5,927) | 1,185 | (4,742) | (48,747) | 9,749 | (38,998) |
| **Այլ համապարփակ վնաս / եկամուտ** | **(253,295)** | **50,659** | **(202,636)** | **(4,648)** | **929** | **(3,719)** |

## 12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| **Կանխիկ միջոցներ** | **435,543** | **575,087** |
| **Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում՝ ներառյալ պարտադիր պահուստները** | **10,261,445** | **3,235,811** |
| **Նոստրո հաշիվներ այլ բանկերում** | | |
| - ՏՀԶԿ կազմի մեջ մտնող բանկեր | 881,451 | 335,348 |
| - Այլ օտարերկրյա բանկեր | 179,140 | 95,797 |
| - 10 խոշորագույն հայկական բանկեր | 2,023 | 2,027 |
| - Փոքր և միջին հայկական բանկեր | 87 | 87 |
| **Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում** | **1,062,701** | **433,259** |
| **Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես ներկայացված է դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվությունում** | **11,759,689** | **4,244,157** |
| Հաշվեգրված տոկոսներ | 3 | 16 |
| **Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | **11,759,692** | **4,244,173** |

Նոստրո հաշիվները ՀՀ կենտրոնական բանկում կապված են վճարահաշվարկային գործունեության հետ և կարող են ելքագրվել ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Բանկերը պարտավոր են ունենալ դեպոնացված դրամական միջոցներ (պարտադիր պահուստ) ՀՀ ԿԲ-ում ՀՀ դրամով ներգրավված գումարների 2%-ի չափով և արտարժույթով ներգրավված գումարների 20%-ի չափով: Օրենսդրությամբ չի սահմանափակվում այդ միջոցների ելքագրումը, սակայն եթե Բանկը չի ապահովում ՀՀ դրամով ներգրավված գումարների գծով նվազագույն միջին ամսական գումարը, ապա կարող են կիրառվել պատժամիջոցներ:

2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ դրամով ներգրավված միջոցների գծով պարտադիր պահուստի գումարը, որը ներառված է ՀՀ ԿԲ-ում նոստրո հաշիվներում, կազմում է 5,278,387 հազար ՀՀ դրամ (2014թ.՝ 105,509 հազար ՀՀ դրամ միայն ՀՀ դրամով ներգրավված միջոցների դիմաց):

## 13. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| **Բանկի կողմից պահվող** | | |
| **Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | | |
| - ՀՀ կառավարության արժեթղթեր | 2,523,825 | - |
| - Միջազգային ֆինանսական հաստատությունների արժեթղթեր | 49,738 | 49,727 |
| | **2,573,563** | **49,727** |
| **Բաժնային ներդրումներ** | | |
| - Կորպորատիվ բաժնետոմսեր | 13,160 | 13,160 |
| | **13,160** | **13,160** |
| | **2,586,723** | **62,887** |
| **Հետգնման պայմանագրերով գրավադրված** | | |
| **Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | | |
| - ՀՀ կառավարության արժեթղթեր | 1,436,272 | 3,118,896 |
| | **1,436,272** | **3,118,896** |

Բանկն իրականացնում է արժեթղթերի փոխառության և վաճառքի գործարքներ հետգնման պայմանագրերի շրջանակներում:

Հետգնման պայմանագրերի շրջանակներում որպես փոխառություն տրամադրված կամ վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ անձանց, իսկ Բանկը փոխարենը ստանում է դրամական միջոցներ: Պայմանագրային կողմը կարող է վերագրավադրել կամ վերավաճառել այդ ֆինանսական ակտիվները, եթե Բանկը կատարում է իր բոլոր պարտականությունները, սակայն պայմանագրային կողմը պարտավոր է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի գործողության ավարտին: Բանկը գտնում է, որ պահպանում է այս արժեթղթերի հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և օգուտները, այդ իսկ պատճառով չի ապաճանաչել դրանք: Այս արժեթղթերը ներկայացվում են որպես «հետգնման պայմանագրերով գրավադրված» արժեթղթեր Ծանոթագրություն 13-ում: Ստացված դրամական միջոցները ճանաչվում են որպես ֆինանսական ակտիվ, իսկ այդ գրավի ձեռքբերման գինը մարելու պարտականության գծով ճանաչվում է ֆինանսական պարտավորություն:

Նշված գործառնությունները իրականացվում են պայմաններով, որոնք սովորական են և ընդունված ստանդարտ վարկավորման և արժեթղթերի փոխառություն գործարքների համար:

Վաճառքի համար մատչելի ակտիվների կազմում ներառված են հետևյալ չգնանշվող բաժնային արժեթղթերը.

| | | | *Վերահսկվող %* | | *Սեպտեմբերի 30,2015թ. (հազար ՀՀ դրամ)* | *Դեկտեմբերի 31, 2014թ. (հազար ՀՀ դրամ)* |
|---|---|---|---|---|---|---|
| *Անվանումը* | *Գրանցման երկիրը* | *Հիմնական գործունեությունը* | *Սեպտեմբերի 30,2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* | | |
| ԱրՔա | Հայաստանի Հանրապետություն | Վճարային համակարգ | 1.25% | 1.25% | 12,143 | 12,143 |
| ՍՎԻՖՏ | Բելգիա | Դրամական փոխանցումներ | 0% | 0% | 1,017 | 1,017 |
| | | | | | **13,160** | **13,160** |

Սկզբնական արժեքով հաշվառվող վաճառքի համար մատչելի բաժնային ներդրումները ներառում են չգնանշվող բաժնային արժեթղթերը դրամական փոխանցումների ոլորտում: Այս ներդրումների համար ակտիվ շուկա գոյություն չունի և վերջերս տեղի չեն ունեցել այնպիսի գործարքներ, որոնք կարող էին վկայություն տրամադրել դրանց ընթացիկ իրական արժեքի մասին: Ի լրումն, զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդի կիրառման արդյունքում ձևավորվում են մի շարք իրական արժեքներ, ինչը պայմանավորված է այս ոլորտում դրամական միջոցների ապագա հոսքերի առկայության հետ կապված անորոշությամբ:

## 14. Պահանջներ բանկերի նկատմամբ

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| **Արտարժույթով ներգրավված միջոցների գծով պարտադիր պահուստ ՀՀ ԿԲ-ում** | **-** | **6,455,766** |
| **Վարկային քարտերով գործառնությունների իրականացման գծով դեպոնացված միջոց ՀՀ ԿԲ –ում** | **65,000** | **142,500** |
| **Ածանցյալ գործիքներ (արժութային սվոպ)** | **–** | **882** |
| **Վարկեր և ավանդներ** | | |
| 10 խոշորագույն հայկական բանկեր | 2,887,823 | 4,488,394 |
| Փոքր և միջին հայկական բանկեր | 1,424,142 | 4,782,584 |
| ՏՀԶԿ կազմի մեջ մտնող բանկեր | 63,712 | 63,881 |
| **Ընդամենը վարկեր և ավանդներ** | **4,375,677** | **9,334,859** |
| **Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ** | **4,440,677** | **15,934,007** |

2014 թվականի դեկտեմբերի ընթացքում ՀՀ ԿԲ-ն վերանայել է արտարժույթով ներգրավված միջոցների պարտադիր պահուստավորումը: Համաձայն նոր կանոնների, որոնք ուժի մեջ էին մտել 2014թ. դեկտեմբերի 18-ին, խստացվել էին արտարժույթով ներգրավված միջոցների պարտադիր պահուստավորման նկատմամբ պահանջները, և անհրաժեշտ էր պահել նշված գումարը ՀՀ ԿԲ-ի նոստրո հաշվին օրական կտրվածքով: Վերը նշված փոփոխությունների համաձայն Բանկը դասակարգել էր արտարժույթով ներգրավված գումարների գծով պարտադիր պահուստները որպես պահանջներ բանկերի նկատմամբ: Նշված կարգը գործել է մինչև 2015թ. հուլիսի 7-ը, որից հետո ՀՀ կենտրոնական բանկը կրկին անցում է կատարել միջին հաշվարկով պահուստավորմանը: Համապատասխանաբար պարտադիր պահուստի մեծությունը ամբողջությամբ վերադասակարգվել է Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հոդվածում:

Արժութային սվոպ համաձայնագիրը՝ 300,000 դոլար գումարով և 1 ԱՄՆ դոլարի դիմաց 471.46 դրամ սփոթ և ֆորվարդային փոխարժեքներով, կնքվել է Հայաստանի 10 խոշորագույն բանկերից մեկի հետ: Դոլարը հետ է գնվել 2015 թ. հունվարի 12-ին: Դրամը ներգրավվել էր տարեկան 22% տոկոսադրույքով:

2015 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՏՀԶԿ բանկերում վարկերի և ավանդների կազմում ընդգրկված 63,712 հազար ՀՀ դրամը (2014թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ՝ 63,881 հազ. դրամ) իրենից ներկայացնում է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ փի-էլ-սի-ում Europay International համակարգին անդամակցելու համար սառեցված ավանդը:

Բանկերի նկատմամբ պահանջներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

**Բանկերի նկատմամբ պահանջների կենտրոնացում**

2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկը համագործակցում է երեք բանկերի հետ (31 դեկտեմբերի 2014թ.՝ ութ բանկ), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր արժեքը կազմում է 4,311,965 հազար ՀՀ դրամ (31 դեկտեմբերի 2014թ.՝ 15,870,127 հազար ՀՀ դրամ):

## 15. Հաճախորդներին տրված վարկեր

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| **Կորպորատիվ վարկեր** | | |
| Վարկեր խոշոր ընկերություններին | 9,800,129 | 16,505,945 |
| Վարկեր փոքր և միջին ընկերություններին | 1,451,237 | 1,586,621 |
| **Ընդամենը կորպորատիվ վարկեր** | **11,251,366** | **18,092,566** |
| **Սպառողական վարկեր** | | |
| Հիփոթեքային վարկեր | 8,877,226 | 9,276,622 |
| Անշարժ գույքի գրավով ապահովված սպառողական վարկեր | 1,364,170 | 1,558,204 |
| Վարկեր փոքր բիզնեսին | 591,349 | 748,681 |
| Ավտոմեքենայի ձեռքբերման վարկեր | 521,231 | 680,899 |
| Վարկային քարտեր | 279,578 | 317,024 |
| Աշխատավարձով ապահովված սպառողական վարկեր | 226,583 | 295,841 |
| Այլ | 50,516 | 33,607 |
| **Ընդամենը սպառողական վարկեր** | **11,910,653** | **12,910,878** |
| **Հաճախորդներին տրված համախառն վարկեր** | **23,162,019** | **31,003,444** |
| Արժեզրկման գծով պահուստ | (3,267,084) | (2,568,811) |
| **Հաճախորդներին տրված զուտ վարկեր** | **19,894,935** | **28,434,633** |

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժն ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2015թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների համար:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Կորպորատիվ վարկեր* | *Սպառողական վարկեր* | *Ընդամենը* |
|---|---|---|---|
| Մնացորդը տարեսկզբին | 2,392,213 | 176,598 | 2,568,811 |
| Զուտ ծախս | 564,523 | 158,270 | 722,793 |
| Դուրսգրումներ | – | (24,520) | (24,520) |
| **Մնացորդը ժամանակաշրջանի վերջին** | **2,956,736** | **310,348** | **3,267,084** |

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժն ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2014թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների համար:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Կորպորատիվ վարկեր* | *Սպառողական վարկեր* | *Ընդամենը* |
|---|---|---|---|
| Մնացորդը տարեսկզբին | 1,163,664 | 178,804 | 1,342,468 |
| Զուտ ծախս | 112,150 | 57,876 | 170,026 |
| Դուրսգրումներ | – | (60,166) | (60,166) |
| **Մնացորդը ժամանակաշրջանի վերջին** | **1,275,814** | **176,514** | **1,452,328** |

### *(ա) Հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշներ*

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Համախառն վարկեր* | *Արժեզրկման պահուստ* | *Զուտ վարկեր* | *Համախառն վարկերի արժեզրկում %* |
|---|---|---|---|---|
| **Կորպորատիվ վարկեր** | | | | |
| **Վարկեր խոշոր ընկերություններին** | | | | |
| Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր | 4,042,906 | (46,493) | 3,996,413 | 1.15% |
| Արժեզրկված վարկեր՝ | | | | |
| - մինչև 90 օր ժամկետանց | 307,581 | (6,152) | 301,429 | 2.0% |
| -90 օրից ավել, բայց 1 տարուց պակաս ժամկետանց | 593,295 | (272,916) | 320,379 | 46.0% |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | 4,856,347 | (2,591,212) | 2,265,135 | 53.4% |
| **Ընդամենն արժեզրկված վարկեր** | **5,757,223** | **(2,870,280)** | **2,886,943** | **49.9%** |
| **Ընդամենը վարկեր խոշոր ընկերություններին** | **9,800,129** | **(2,916,773)** | **6,883,356** | **29.8%** |
| **Վարկեր փոքր և միջին ընկերություններին** | | | | |
| Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր | 1,016,345 | (11,688) | 1,004,657 | 1.15% |
| Արժեզրկված վարկեր՝ | | | | |
| - ոչ ժամկետանց | 75,607 | (1,512) | 74,095 | 2.0% |
| - մինչև 90 օր ժամկետանց | 136,192 | (2,724) | 133,468 | 2.0% |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | 223,093 | (24,039) | 199,054 | 10.8% |
| **Ընդամենն արժեզրկված վարկեր** | **434,892** | **(28,275)** | **406,617** | **6.5%** |
| **Ընդամենը վարկեր փոքր և միջին ընկերություններին** | **1,451,237** | **(39,963)** | **1,411,274** | **2.8%** |
| **Ընդամենը կորպորատիվ վարկեր** | **11,251,366** | **(2,956,736)** | **8,294,630** | **26.28%** |
| **Սպառողական վարկեր** | | | | |
| **Հիփոթեքային վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 8,485,937 | (16,972) | 8,468,965 | 0.2% |
| - ոչ ժամկետանց, բայց արժեզրկված | 59,777 | (11,955) | 47,822 | 20.0% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 65,676 | (26,270) | 39,406 | 40.0% |
| - 31-90 օր ժամկետանց | 77,297 | (30,919) | 46,378 | 40.0% |
| - 91-180 օր ժամկետանց | 53,720 | (21,488) | 32,232 | 40.0% |
| -181-270 օր ժամկետանց | 32,503 | (13,001) | 19,502 | 40.0% |
| - ավելի քան 271 օր ժամկետանց | 102,316 | (40,926) | 61,390 | 40.0% |
| **Ընդամենը հիփոթեքային վարկեր** | **8,877,226** | **(161,531)** | **8,715,695** | **1.8%** |
| **Անշարժ գույքի գրավով ապահովված սպառողական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 1,237,812 | (2,476) | 1,235,336 | 0.2% |
| - ոչ ժամկետանց, բայց արժեզրկված | 14,195 | (3,975) | 10,220 | 28.0% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 37,061 | (20,754) | 16,307 | 56.0% |
| - 31-90 օր ժամկետանց | 13,243 | (7,416) | 5,827 | 56.0% |
| - 91-180 օր ժամկետանց | 12,327 | (6,903) | 5,424 | 56.0% |
| -181-270 օր ժամկետանց | 37,532 | (21,018) | 16,514 | 56.0% |
| - ավելի քան 271 օր ժամկետանց | 12,000 | (6,720) | 5,280 | 56.0% |
| **Ընդամենն անշարժ գույքի գրավով ապահովված սպառողական վարկեր** | **1,364,170** | **(69,262)** | **1,294,908** | **5.1%** |
| **Վարկեր փոքր բիզնեսին** | | | | |
| - ոչ ժամկետանց | 492,396 | (985) | 491,411 | 0.2% |
| - ոչ ժամկետանց, բայց արժեզրկված | 10,451 | (2,613) | 7,838 | 25.0% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 11,622 | (5,811) | 5,811 | 50.0% |
| - 31-90 օր ժամկետանց | 18,264 | (9,132) | 9,132 | 50.0% |
| - 91-180 օր ժամկետանց | 19,162 | (9,581) | 9,581 | 50.0% |
| -181-270 օր ժամկետանց | 37,122 | (18,561) | 18,561 | 50.0% |
| - ավելի քան 271 օր ժամկետանց | 2,332 | (1,166) | 1,166 | 50.0% |
| **Ընդամենը վարկեր փոքր բիզնեսին** | **591,349** | **(47,849)** | **543,500** | **8.1%** |

| *(հազար ՀՀ դրամ)* | *Համախառն վարկեր* | *Արժեզրկման պահուստ* | *Զուտ վարկեր* | *Համախառն վարկերի արժեզրկում %* |
|---|---|---|---|---|
| **Ավտոմեքենայի ձեռքբերման վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 487,920 | (976) | 486,944 | 0.2% |
| - ոչ ժամկետանց, բայց արժեզրկված | 2,330 | (571) | 1,759 | 24.5% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 4,314 | (2,114) | 2,200 | 49.0% |
| - 31-90 օր ժամկետանց | 8,185 | (4,011) | 4,174 | 49.0% |
| - 91-180 օր ժամկետանց | 9,794 | (4,799) | 4,995 | 49.0% |
| - ավելի քան 271 օր ժամկետանց | 8,688 | (4,257) | 4,431 | 49.0% |
| **Ընդամենն ավտոմեքենայի ձեռքբերման վարկեր** | **521,231** | **(16,728)** | **504,503** | **3.2%** |
| **Վարկային քարտեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 264,475 | (529) | 263,946 | 0.2% |
| - ոչ ժամկետանց, բայց արժեզրկված | 12,224 | (5,868) | 6,356 | 48.0% |
| - 91-180 օր ժամկետանց | 200 | (96) | 104 | 48.0% |
| - 181-270 օր ժամկետանց | 2,679 | (1,286) | 1,393 | 48.0% |
| **Ընդամենը վարկային քարտեր** | **279,578** | **(7,779)** | **271,799** | **2.8%** |
| **Աշխատավարձով ապահովված սպառողական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 211,348 | (423) | 210,925 | 0.2% |
| - ոչ ժամկետանց, բայց արժեզրկված | 2,240 | (538) | 1,702 | 24.0% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 5,104 | (2,450) | 2,654 | 48.0% |
| - 31-90 օր ժամկետանց | 4,277 | (2,053) | 2,224 | 48.0% |
| - 91-180 օր ժամկետանց | 1,845 | (886) | 959 | 48.0% |
| - 181-270 օր ժամկետանց | 1,769 | (849) | 920 | 48.0% |
| **Ընդամենն աշխատավարձով ապահովված սպառողական վարկեր** | **226,583** | **(7,199)** | **219,384** | **3.2%** |
| **Այլ սպառողական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 50,516 | - | 50,516 | 0.0% |
| **Ընդամենն այլ սպառողական վարկեր** | **50,516** | **-** | **50,516** | **0.0%** |
| **Ընդամենը սպառողական վարկեր** | **11,910,653** | **(310,348)** | **11,600,305** | **2.61%** |
| **Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր** | **23,162,019** | **(3,267,084)** | **19,894,935** | **14.11%** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Համախառն վարկեր* | *Արժեզրկման պահուստ* | *Զուտ վարկեր* | *Համախառն վարկերի արժեզրկում %* |
|---|---|---|---|---|
| **Կորպորատիվ վարկեր** | | | | |
| **Վարկեր խոշոր ընկերություններին** | | | | |
| Դրամական միջոցներով ապահովված վարկեր | 3,087,305 | – | 3,087,305 | 0% |
| Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող այլ վարկեր | 6,561,264 | (75,454) | 6,485,810 | 1.15% |
| Արժեզրկված վարկեր՝ | | | | |
| - ոչ ժամկետանց | 782,946 | (15,659) | 767,287 | 2.0% |
| -90 օրից ավել, բայց 1 տարուց պակաս ժամկետանց | 949,628 | (322,874) | 626,754 | 34.0% |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | 5,124,802 | (1,937,644) | 3,187,158 | 37.8% |
| **Ընդամենն արժեզրկված վարկեր** | **6,857,376** | **(2,276,177)** | **4,581,199** | **33.2%** |
| **Ընդամենը վարկեր խոշոր ընկերություններին** | **16,505,945** | **(2,351,631)** | **14,154,314** | **14.2%** |
| **Վարկեր փոքր և միջին ընկերություններին** | | | | |
| Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր | 1,356,185 | (15,598) | 1,340,587 | 1.15% |
| Արժեզրկված վարկեր՝ | | | | |
| -90 օրից ավել, բայց 1 տարուց պակաս ժամկետանց | 45,193 | (903) | 44,290 | 2.0% |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | 185,243 | (24,081) | 161,162 | 13.0% |
| **Ընդամենն արժեզրկված վարկեր** | **230,436** | **(24,984)** | **205,452** | **10.8%** |
| **Ընդամենը վարկեր փոքր և միջին ընկերություններին** | **1,586,621** | **(40,582)** | **1,546,039** | **2.6%** |
| **Ընդամենը կորպորատիվ վարկեր** | **18,092,566** | **(2,392,213)** | **15,700,353** | **13.22%** |
| **Սպառողական վարկեր** | | | | |
| **Հիփոթեքային վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 9,091,109 | (18,182) | 9,072,927 | 0.2% |
| - ոչ ժամկետանց, բայց արժեզրկված | 8,999 | (1,800) | 7,199 | 20.0% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 55,968 | (22,387) | 33,581 | 40.0% |
| - 31-90 օր ժամկետանց | 87,375 | (34,950) | 52,425 | 40.0% |
| - 91-180 օր ժամկետանց | 14,810 | (5,924) | 8,886 | 40.0% |
| -181-270 օր ժամկետանց | 18,361 | (7,344) | 11,017 | 40.0% |
| **Ընդամենը հիփոթեքային վարկեր** | **9,276,622** | **(90,587)** | **9,186,035** | **1.0%** |
| **Անշարժ գույքի գրավով ապահովված սպառողական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 1,502,102 | (3,004) | 1,499,098 | 0.2% |
| - ոչ ժամկետանց, բայց արժեզրկված | 9,481 | (2,655) | 6,826 | 28.0% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 8,191 | (4,587) | 3,604 | 56.0% |
| - 31-90 օր ժամկետանց | 12,836 | (7,188) | 5,648 | 56.0% |
| - 91-180 օր ժամկետանց | 9,721 | (5,444) | 4,277 | 56.0% |
| -181-270 օր ժամկետանց | 6,612 | (3,703) | 2,909 | 56.0% |
| - ավելի քան 271 օր ժամկետանց | 9,261 | (5,186) | 4,075 | 56.0% |
| **Ընդամենն անշարժ գույքի գրավով ապահոված սպառողական վարկեր** | **1,558,204** | **(31,767)** | **1,526,437** | **2.0%** |
| **Վարկեր փոքր բիզնեսին** | | | | |
| - ոչ ժամկետանց | 702,792 | (1,406) | 701,386 | 0.2% |
| - ոչ ժամկետանց, բայց արժեզրկված | 13,941 | (3,485) | 10,456 | 25.0% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 11,488 | (5,744) | 5,744 | 50.0% |
| - 31-90 օր ժամկետանց | 13,229 | (6,615) | 6,614 | 50.0% |
| - 91-180 օր ժամկետանց | 7,231 | (3,615) | 3,616 | 50.0% |
| **Ընդամենը վարկեր փոքր բիզնեսին** | **748,681** | **(20,865)** | **727,816** | **2.8%** |

| *(հազար ՀՀ դրամ)* | *Համախառն վարկեր* | *Արժեզրկման պահուստ* | *Զուտ վարկեր* | *Համախառն վարկերի արժեզրկում %* |
|---|---|---|---|---|
| **Ավտոմեքենայի ձեռքբերման վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 644,516 | (1,289) | 643,227 | 0.2% |
| - ոչ ժամկետանց, բայց արժեզրկված | 3,334 | (817) | 2,517 | 24.5% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 8,775 | (4,300) | 4,475 | 49.0% |
| - 31-90 օր ժամկետանց | 13,970 | (6,845) | 7,125 | 49.0% |
| -181-270 օր ժամկետանց | 6,736 | (3,301) | 3,435 | 49.0% |
| - ավելի քան 271 օր ժամկետանց | 3,568 | (1,748) | 1,820 | 49.0% |
| **Ընդամենն ավտոմեքենայի ձեռքբերման վարկեր** | **680,899** | **(18,300)** | **662,599** | **2.7%** |
| **Վարկային քարտեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 300,157 | (600) | 299,557 | 0.2% |
| - ոչ ժամկետանց, բայց արժեզրկված | 16,867 | (8,096) | 8,771 | 48.0% |
| **Ընդամենը վարկային քարտեր** | **317,024** | **(8,696)** | **308,328** | **2.7%** |
| **Աշխատավարձով ապահովված սպառողական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 283,726 | (567) | 283,159 | 0.2% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 5,014 | (2,407) | 2,607 | 48.0% |
| - 31-90 օր ժամկետանց | 3,464 | (1,663) | 1,801 | 48.0% |
| - 91-180 օր ժամկետանց | 2,673 | (1,283) | 1,390 | 48.0% |
| - 181-270 օր ժամկետանց | 964 | (463) | 501 | 48.0% |
| **Ընդամենն աշխատավարձով ապահովված սպառողական վարկեր** | **295,841** | **(6,383)** | **289,458** | **2.2%** |
| **Այլ սպառողական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 33,607 | - | 33,607 | 0.0% |
| **Ընդամենն այլ սպառողական վարկեր** | **33,607** | **-** | **33,607** | **0.0%** |
| **Ընդամենը սպառողական վարկեր** | **12,910,878** | **(176,598)** | **12,734,280** | **1.37%** |
| **Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր** | **31,003,444** | **(2,568,811)** | **28,434,633** | **8.29%** |

### *(բ) Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառված հիմնական ենթադրություններ և դատողություններ*

*(i) Կորպորատիվ վարկեր*

Բանկը գնահատում է կորպորատիվ վարկերի արժեզրկումն արժեզրկման անհատական հայտանիշներ ունեցող վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության և արժեզրկման անհատական հայտանիշներ չունեցող վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի հիման վրա:
Կորպորատիվ վարկերի գծով արժեզրկման պահուստը որոշելիս ղեկավարությունը կատարել է հետևյալ հիմնական ենթադրությունները.

- չարժեզրկված և դրամական միջոցներով ապահովված կորպորատիվ վարկերի համար Բանկը ստեղծել է պահուստ 0%-ի չափով, այլ կորպորատիվ չարժեզրկված վարկերի համար՝ 1.15%-ի չափով՝ հաշվի առնելով տնտեսական միջավայրի և շուկայական կորստի փորձը.

2015թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների ընթացքում Բանկը վերանայել է 43,772 հազար դրամ գումարով կորպորատիվ վարկերի պայմաններ (2014թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների ընթացքում Բանկը չի վերանայել է որևէ առևտրային վարկի պայման), որոնք հակառակ դեպքում կդառնային ժամկետանց կամ արժեզրկված: Պայմանների նման վերանայման նպատակն է կառավարել հաճախորդի հետ փոխհարաբերությունները և մեծացնել վարկերի մարման հնարավորությունները:

Կորպորատիվ վարկերի գծով արժեզրկման պահուստը 409,775 հազար ՀՀ դրամ ավել կլիներ (2014թ-ին՝ 612,819 հազար ՀՀ դրամ), եթե գրավի շուկայական արժեքը 15%-ով ցածր գնահատվեր հաշվետու ամսաթվի դրությամբ:

*(ii) Սպառողական վարկեր*

Սպառողական վարկերի գծով արժեզրկումը գնահատելիս Բանկը հիմնվում է յուրաքանչյուր տեսակի վարկերի գծով վնաս կրելու իր նախկին պատմական և շուկայի փորձի վրա: Սպառողական վարկերի գծով արժեզրկումից կորուստները որոշելիս ղեկավարության կողմից կիրառված հիմնական ենթադրությունները ներառում են վնասի հետևյալ գնահատումները.

- Չարժեզրկված սպառողական վարկեր՝ մինչև 0.2%
- Ոչ ժամկետանց, բայց արժեզրկված վարկերի հավաքագրման ծախսերը չեն գերազանցի վարկերի՝
  Ա) հիփոթեքային վարկեր՝ 20%,
  Բ) անշարժ գույքի գրավով ապահովված սպառողական վարկեր՝ 28%,
  Գ) վարկեր փոքր բիզնեսին՝ 25%,
  Դ) ավտոմեքենայի ձեռքբերման վարկեր՝ 24.5%,
  Ե) վարկային քարտեր՝ 48%.
  Զ) աշխատավարձով ապահովված սպառողական վարկեր՝ 24%
- Ժամկետանց և արժեզրկված վարկերի հավաքագրման ծախսերը չեն գերազանցի՝
  Ա) հիփոթեքային վարկեր՝ 40%,
  Բ) անշարժ գույքի գրավով ապահովված սպառողական վարկեր՝ 56%,
  Գ) վարկեր փոքր բիզնեսին՝ 50%,
  Դ) ավտոմեքենայի ձեռքբերման վարկեր՝ 49%
  Ե) վարկային քարտեր՝ 48%.
  Զ) աշխատավարձով ապահովված սպառողական վարկեր՝ 48%

## (գ) Գրավի վերլուծություն

### *(i) Կորպորատիվ վարկեր*

Կորպորատիվ վարկերը ենթակա են անհատական հիմունքով գնահատման և արժեզրկման ստուգման: Կորպորատիվ հաճախորդի վարկունակությունը նրան տրամադրված վարկի վարկային ռիսկի չափը բնութագրող ամենակարևոր ցուցանիշն է: Այնուամենայնիվ, գրավը լրացուցիչ ապահովվածություն է, և Բանկը որպես կանոն գրավ է պահանջում կորպորատիվ հաճախորդներից:

Բանկի կողմից պահվող արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող վարկերի գծով գրավների իրական արժեքը 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 4,313,862 հազար ՀՀ դրամ (2014թ.՝ 6,032,999 հազար ՀՀ դրամ)

### *(ii) Սպառողական վարկեր*

Հիփոթեքային վարկերը և անշարժ գույքով ապահովված սպառողական վարկերն ապահովված են վարկի առարկա անշարժ գույքով: Բանկի քաղաքականության համաձայն հիփոթեքային վարկերը տրամադրվում են, երբ վարկ-գրավի արժեք հարաբերակցությունը չի գերազանցում 70%-ը վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ: Փոքր բիզնեսի վարկերն ապահովված են անշարժ գույքով: Ավտոմեքենայի ձեռքբերման վարկերն ապահովված են վարկի առարկա ավտոմեքենայով: Աշխատավարձով ապահովված սպառողական վարկերի և վարկային քարտերի համար ապահովվածությունն աշխատավարձն է:

### *(iii) Բանկի սեփականության անցած գրավ*

2015թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների ընթացքում Բանկը ձեռք է բերել 1,117,310 հազար ՀՀ դրամ իրական արժեքով ակտիվներ՝ կորպորատիվ վարկերի դիմաց գրավադրված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռքբերելու ճանապարհով (2014թ.-ին՝ զրո):

2015թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների ընթացքում Բանկը ձեռք է բերել 7,145 հազար ՀՀ դրամ իրական արժեքով անշարժ գույք՝ սպառողական վարկերի դիմաց ընդունված գրավի նկատմամբ սեփականության իրավունք ձեռքբերելու ճանապարհով (2014թ.-ին՝ 62,796 հազար ՀՀ դրամ): 2015թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների ընթացքում Բանկը վաճառել է գրավների մի մասը 28,204 հազար ՀՀ դրամով (2014թ.-ին՝ 33,485 հազար ՀՀ դրամ):

Բանկը մտադիր է վաճառել այդ ակտիվները հնարավորինս սեղմ ժամկետներում:

## (դ) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը ծավալել են տնտեսության հետևյալ ճյուղերում՝

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| Առևտուր | 3,813,613 | 4,876,379 |
| Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և փայտամշակում | 2,084,213 | 2,379,729 |
| Արդյունաբերություն | 1,915,516 | 2,535,465 |
| Էներգետիկա | 1,753,724 | 6,442,671 |
| Տրանսպորտ | 1,631,536 | 1,790,352 |
| Հանրային սնունդ և այլ ծառայություններ | 52,764 | 67,970 |
| Սպառողական վարկեր | 11,910,653 | 12,910,878 |
| | **23,162,019** | **31,003,444** |
| Արժեզրկման գծով պահուստ | (3,267,084) | (2,568,811) |
| | **19,894,935** | **28,434,633** |

## (ե) Վարկային մնացորդների կենտրոնացում

2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկն ունի վեց վարկառու կամ կապակցված վարկառուների խմբեր (31 դեկտեմբերի 2014թ.՝ ինը), որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկերի ընդհանուր գումարը կազմում է 7,068,000 հազար ՀՀ դրամ (31 դեկտեմբերի 2014թ.՝ 14,782,423 հազար ՀՀ դրամ):

## (զ) Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 24-ի (դ) կետում, որն արտացոլում է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

## 16. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

| *(հազ.դրամ)* | *Հող և շենքեր* | *Համակարգիչներ և հաղորդակցման միջոցներ* | *Գույք* | *Փոխադրամիջոցներ* | *Վարձակալ. հիմն.միջոցների բարելավում* | *Ոչ նյութական ակտիվներ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| Սկզբնական արժեք | | | | | | | |
| Մնացորդը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ | 945,079 | 312,582 | 258,623 | 53,700 | 22,769 | 164,852 | **1,757,605** |
| Ավելացումներ | – | 11,719 | 60,112 | – | – | – | **71,831** |
| Օտարումներ | – | (11,066) | (2,446) | – | – | – | **(13,512)** |
| **Մնացորդը 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ** | **945,079** | **313,235** | **316,289** | **53,700** | **22,769** | **164,852** | **1,815,924** |
| Մաշվածություն և ամորտիզացիա | | | | | | | |
| Մնացորդը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ | (143,241) | (222,201) | (194,082) | (53,700) | (19,796) | (92,784) | **(725,804)** |
| Մաշվածություն և ամորտիզացիա | (14,961) | (27,476) | (22,964) | – | (2,056) | (2,046) | **(69,503)** |
| Օտարումներ | – | 10,760 | 2,408 | – | – | – | **13,168** |
| **Մնացորդը 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ** | **(158,202)** | **(238,917)** | **(214,638)** | **(53,700)** | **(21,852)** | **(94,830)** | **(782,139)** |
| **Հաշվեկշռային արժեք 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ** | **786,877** | **74,318** | **101,651** | **–** | **917** | **70,022** | **1,033,785** |
| Սկզբնական արժեք | | | | | | | |
| Մնացորդը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ | 942,142 | 283,802 | 252,531 | 53,700 | 21,193 | 163,228 | **1,716,596** |
| Ավելացումներ | 2,937 | 32,191 | 11,012 | – | 1,576 | 1,624 | **49,340** |
| Օտարումներ | – | (3,411) | (4,920) | – | – | – | **(8,331)** |
| **Մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **945,079** | **312,582** | **258,623** | **53,700** | **22,769** | **164,852** | **1,757,605** |
| Մաշվածություն և ամորտիզացիա | | | | | | | |
| Մնացորդը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ | (123,521) | (191,050) | (168,799) | (53,700) | (17,064) | (89,742) | **(643,876)** |
| Տարվա մաշվածություն և ամորտիզացիա | (19,720) | (33,802) | (30,126) | – | (2,732) | (3,042) | **(89,422)** |
| Օտարումներ | – | 2,651 | 4,843 | – | – | – | **7,494** |
| **Մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **(143,241)** | **(222,201)** | **(194,082)** | **(53,700)** | **(19,796)** | **(92,784)** | **(725,804)** |
| **Հաշվեկշռային արժեք 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **801,838** | **90,381** | **64,541** | **–** | **2,973** | **72,068** | **1,031,801** |

2015թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների ընթացքում հիմնական միջոցների ձեռքբերմանը կամ շինարարությանը վերաբերող կապիտալացված փոխառության ծախսումներ չեն եղել (2014թ.-ին՝ զրո):

## 17. Այլ ակտիվներ

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| Դրամական փոխանցումների և վճարահաշվարկային համակարգերի գծով ստացվելիք գումարներ | 11,441 | 8,456 |
| Այլ ստացվելիք գումարներ | 2,542 | 1,994 |
| **Ընդամենն այլ ֆինանսական ակտիվներ** | **13,983** | **10,450** |
| Բանկի սեփականությանն անցած ակտիվներ | 1,371,901 | 275,586 |
| Այլ կանխավճարներ | 86,586 | 47,892 |
| Շահութահարկի գծով կանխավճարներ | 63,755 | 51,205 |
| Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով կանխավճարներ | 3,721 | 53,500 |
| Այլ | 27,269 | 22,127 |
| **Ընդամենն այլ ոչ ֆինանսական ակտիվներ** | **1,553,232** | **450,310** |
| **Ընդամենն այլ ակտիվներ** | **1,567,215** | **460,760** |

2015թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների ընթացքում 7,419 հազար ՀՀ դրամի դեբիտորական պարտքեր արժեզրկվել են և դուրս գրվել (2014թ.՝ 16,125 հազար ՀՀ դրամ):

Ստորև ներկայացված են բանկի սեփականությանն անցած ակտիվների բնույթը և հաշվեկշռային արժեքը 2015թ. սեպտեմբերի 30-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| Հող և շենքեր | **1,371,901** | **275,586** |

Ղեկավարությունը գտնում է, որ բանկի սեփականությանն անցած ակտիվների հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է վերջիններիս իրական արժեքին՝ հանած վաճառքի կազմակերպման ծախսերը՝ 2015թ. սեպտեմբերի 30-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

## 18. Բանկերի ավանդներ և մնացորդներ

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| Վարկեր և ժամկետային ավանդներ | 636,663 | 5,139,204 |
| Վոստրո հաշիվներ | 8 | 8 |
| | **636,671** | **5,139,212** |

2015 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային կողմ բանկ (31 դեկտեմբերի 2014թ.՝ մեկ բանկ), որի մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: Համախառն մնացորդը 2014թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 3,912,610 հազար ՀՀ դրամ:

## 19. Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| ՀՀ ԿԲ-ին վճարվելիք գումարներ | **1,400,399** | **3,057,139** |

Համաձայն հետգնման պայմանագրերի Բանկը կարող է որպես փոխառություն տրամադրել արժեթղթեր կամ վաճառել արժեթղթեր և գնել արժեթղթեր՝ համաձայն վերավաճառքի պայմանագրերի:
Հետգնման պայմանագրերին համաձայն վաճառված կամ փոխատվությամբ տրված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմերին և Բանկը ստանում է դրամական միջոցներ փոխանցման դիմաց: Այդ ֆինանսական ակտիվները կարող են կրկին գրավադրվել կամ վերավաճառվել, գործընկերների կողմից Բանկի դեֆոլտի բացակայության դեպքում, բայց գործընկերն ունի պարտավորություն վերադարձնել արժեթղթերը պայմանագրի մարման ամսաթվին: Բանկը գտնում է, որ պահպանում է այդ արժեթղթերի էականորեն բոլոր ռիսկերն ու օգուտները, հետևաբար, չի ապաճանաչում դրանք: Այս արժեթղթերը 1,436,272 հազ.դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

3,118,896 հազար ՀՀ դրամ) ներկայացվում են որպես «հետգնման պայմանագրերով գրավադրված» Ծանոթագրություն 13-ում: Այս գործարքներն իրականացվում են ստանդարտ վարկավորման, պարտատոմսերի փոխառության և վարկավորման գործընթացների պայմաններին բնորոշ պայմաններին համաձայն:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է այն ֆինանսական ակտիվների ամփոփ նկարագիրը, որոնք փոխանցվել են այնպես, որ փոխանցված ֆինանսական ակտիվներն ամբողջությամբ կամ դրանց մի մասը ապաճանաչման չափանիշներին չեն բավարարում:

| *(հազար ՀՀ դրամ)* | ***Փոխանցված ֆինանսական ակտիվներ*** | ***Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ***<br>ՀՀ կառավարության պարտքային արժեթղթեր<br>*Սեպտեմբերի 30 2015թ.* |
|---|---|---|
| Հաշվեկշռային արժեք<br>Ակտիվներ | Հետգնման պայմանագրեր | 1,436,272 |
| Հաշվեկշռային արժեք<br>Այդ ակտիվների հետ կապված պարտավորություններ | Հետգնման պայմանագրեր | 1,400,399 |
| **Զուտ դիրք** | | **(35,873)** |

| *(հազար ՀՀ դրամ)* | ***Փոխանցված ֆինանսական ակտիվներ*** | ***Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ***<br>ՀՀ կառավարության պարտքային արժեթղթեր<br>*Դեկտեմբերի 31 2014թ.* |
|---|---|---|
| Հաշվեկշռային արժեք<br>Ակտիվներ | Հետգնման պայմանագրեր | 3,118,896 |
| Հաշվեկշռային արժեք<br>Այդ ակտիվների հետ կապված պարտավորություններ | Հետգնման պայմանագրեր | 3,057,139 |
| **Զուտ դիրք** | | **(61,757)** |

## 20. Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ | | |
| - Ֆիզիկական անձինք | 3,738,215 | 3,974,227 |
| - Իրավաբանական անձինք | 645,813 | 534,765 |
| Ժամկետային ավանդներ | | |
| - Ֆիզիկական անձինք | 23,217,347 | 23,967,980 |
| - Իրավաբանական անձինք | 2,068,531 | 5,360,616 |
| | **29,669,906** | **33,837,588** |

2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկի հաճախորդների ավանդներից 116,979 հազար ՀՀ դրամ գումարով մնացորդները ծառայում են որպես գրավ Բանկի կողմից տրամադրված վարկերի և վարկային պարտավորվածությունների համար (31 դեկտեմբերի 2014թ.՝ 68,396 հազար ՀՀ դրամ): 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկն ունի հինգ հաճախորդ կամ փոխկապակցված հաճախորդների խումբ (31 դեկտեմբերի 2014թ.՝ հինգ), որոնց միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս մնացորդները կազմում են 7,547,093 հազար ՀՀ դրամ (31 դեկտեմբերի 2014թ.՝ 10,496,131 հազար ՀՀ դրամ):

Համաձայն Հայաստանի օրենսդրության Բանկը պարտավոր է մարել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները ավանդատուի պահանջով: Եթե ժամկետային ավանդը մարվում է ավանդատուի պահանջով նախքան ժամկետի ավարտը, տոկոսները վճարվում են ցպահանջ ավանդների տոկոսադրույքով, եթե պայմանագրում այլ տոկոսադրույք սահմանված չէ:

## 21. Այլ ներգրավված միջոցներ

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| Վարկ Միջազգային Ֆինանսական Կորպորացիայից (ՄՖԿ) | 1,261,661 | 1,653,201 |
| Վարկեր Ազգային հիփոթեքային ընկերությունից | 1,055,710 | 955,760 |
| Վարկ Նավթ Արտահանող Երկրների Կազմակերպության (ՆԱԵԿ) Միջազգային Զարգացման Հիմնադրամից (ՄԶՀ) | - | 396,607 |
| Վարկեր Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկից (ՎԶԵԲ) | - | 342,965 |
| | **2,317,371** | **3,348,533** |

### (ա) Սահմանափակումների խախտում

Բանկը խախտել է իր որոշ սահմանափակումների առավելագույն շեմերը ՄՖԿ-ի հետ: Ֆինանսական հաշվետվությունների հրապարակման օրվա դրությամբ ղեկավարությունը չի ստացել պարտավորությունների խախտման գծով ներում/կասեցում, այդ պատճառով վարկերը դարձել են ցպահանջ 2015թ. սեպտեմբերի 30-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Համապատասխանաբար Ծանոթագրություն 24-ում 1,261,661 հազար ՀՀ դրամի վարկերը դասակարգվել են որպես ցպահանջ և մինչև մեկ ամիս ժամկետով տոկոսադրույքի ճեղքվածքի, իրացվելիության և մարման աղյուսակներում:

## 22. Այլ պարտավորություններ

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| Աշխատավարձ և նմանատիպ կրեդիտորական պարտքեր | 45,140 | 58,360 |
| Մատակարարների գծով կրեդիտորական պարտքեր | 22,198 | 17,273 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 24,977 | 19,683 |
| **Ընդամենն այլ ֆինանսական պարտավորություններ** | **92,315** | **95,316** |
| Այլ հարկերի գծով կրեդիտորական պարտքեր | 49,134 | 38,880 |
| Հետաձգված եկամուտ | 3,462 | 4,667 |
| Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ | 7,804 | 7,961 |
| **Ընդամենն այլ ոչ ֆինանսական պարտավորություններ** | **60,400** | **51,508** |
| **Ընդամենն այլ պարտավորություններ** | **152,715** | **146,824** |

## 23. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

### (ա) Կանոնադրական կապիտալ և էմիսիոն եկամուտ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 81,251 սովորական բաժնետոմսից (2014թ.-ին՝ 81,251): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 100,000 դրամ: Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմսը մեկ ձայն սկզբունքով:

### (բ) Պահուստների բնույթը և նպատակը

*Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ*

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

### (գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով: ՀՀ օրենսդրության համաձայն հաշվետու ամսաթվի դրությամբ բաշխման ենթակա պահուստներ չեն եղել:

## 24. Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը բնորոշ գործոն է բանկային ոլորտի համար և Բանկի գործառնությունների կարևոր տարր է: Հիմնական ռիսկերը, որոնց ենթակա է Բանկը, շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերն են:

### (ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթակա է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող պրոդուկտների ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի վերահսկման, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար: Կառավարման հանձնաժողովը՝ Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի (ԱՊԿՀ) աջակցությամբ պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Բանկի գործունեության ապահովման համար:

### (բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում:

Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է պարտքային և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթակա են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների և արտարժույթի փոխարժեքների փոփոխություններին:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա ընդունելի սահմաններում պահպանել այս ռիսկին ենթակա լինելու աստիճանը՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿՀ-ն: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են ԱՊԿՀ-ի կողմից:

Բանկը շուկայական ռիսկը կառավարում է սահմանելով ֆինանսական գործիքների բաց դիրքի, տոկոսադրույքի ժամկետայնության և արտարժութային դիրքերի գծով սահմանաչափեր, ինչպես նաև «վնասի դադարեցման» սահմանաչափեր, որոնք կանոնավոր կերպով վերանայվում և հաստատվում են ԱՊԿՀ-ի կողմից:

#### *(i) Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Բանկը ենթակա է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

*Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծություն*

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների ճեղքվածքների մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների՝ ըստ ժամկետների ճեղքվածքների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար.

| *(հազար ՀՀ դրամ)* | *Մինչև 3 ամիս* | *3-6 ամիս* | *6-12 ամիս* | *1-5 տարի* | *Ավելի քան 5 տարի* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|
| **30 սեպտեմբերի 2015թ.** | | | | | | |
| **Տոկոսակիր ակտիվներ** | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 1,060,800 | – | – | – | – | 1,060,800 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 130,700 | 7,989 | 814,299 | 3,056,847 | – | 4,009,835 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 1,469,908 | 2,368,381 | 473,676 | – | – | 4,311,965 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 1,281,880 | 1,226,614 | 1,645,728 | 9,553,559 | 6,187,154 | 19,894,935 |
| | **3,943,288** | **3,602,984** | **2,933,703** | **12,610,406** | **6,187,154** | **29,277,535** |
| **Տոկոսակիր պարտավորություններ** | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 29,838 | 19,908 | 24,589 | 562,328 | – | 636,663 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ | 1,400,399 | – | – | – | – | 1,400,399 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 13,277,814 | 6,763,952 | 7,424,100 | 1,237,143 | – | 28,703,009 |
| Այլ ներգրաված միջոցներ | 1,305,148 | 17,578 | 42,358 | 607,344 | 344,943 | 2,317,371 |
| Ստորադաս փոխառություն մայր ընկերությունից | – | 2,451 | – | – | 2,368,134 | 2,370,585 |
| | **16,013,199** | **6,803,889** | **7,491,047** | **2,406,815** | **2,713,077** | **35,428,027** |
| **Տոկոսադրույքի ճեղքվածք** | (12,069,911) | (3,200,905) | (4,557,344) | 10,203,591 | 3,474,077 | (6,150,492) |

| *(հազար ՀՀ դրամ)* | *Մինչև 3 ամիս* | *3-6 ամիս* | *6-12 ամիս* | *1-5 տարի* | *Ավելի քան 5 տարի* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|
| **31 դեկտեմբերի 2014թ.** | | | | | | |
| **Տոկոսակիր ակտիվներ** | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 431,351 | – | – | – | – | 431,351 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 21,723 | 47,825 | – | 3,099,075 | – | 3,168,623 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 5,982,940 | 1,673,151 | 1,614,887 | – | – | 9,270,978 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 1,234,582 | 3,025,717 | 5,715,775 | 11,781,182 | 6,677,377 | 28,434,633 |
| | **7,670,596** | **4,746,693** | **7,330,662** | **14,880,257** | **6,677,377** | **41,305,585** |
| **Տոկոսակիր պարտավորություններ** | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 1,686,957 | 14,839 | 3,135,389 | 302,019 | – | 5,139,204 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ | 3,057,139 | – | – | – | – | 3,057,139 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 11,272,525 | 4,933,491 | 9,661,626 | 7,209,422 | – | 33,077,064 |
| Այլ ներգրաված միջոցներ | 2,433,565 | 13,999 | 34,604 | 511,001 | 355,364 | 3,348,533 |
| | **18,450,186** | **4,962,329** | **12,831,619** | **8,022,442** | **355,364** | **44,621,940** |
| **Տոկոսադրույքի ճեղքվածք** | (10,779,590) | (215,636) | (5,500,957) | 6,857,815 | 6,322,013 | (3,316,355) |

*Միջին արդյունավետ տոկոսադրույքներ*

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Բանկի տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2015թ. սեպտեմբերի 30-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների՝ մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունները:

| | *2015թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %* | | | *2014թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *ՀՀ դրամ* | *ԱՄՆ դոլար* | *Այլ արտարժույթ* | *ՀՀ դրամ* | *ԱՄՆ դոլար* | *Այլ արտարժույթ* |
| **Տոկոսակիր ակտիվներ** | | | | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 13.8% | 6.4% | – | 14.0% | – | – |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | – | 7.3% | – | – | 6.1% | – |
| Հաճախորդներին տրված վարկեր | 13.7% | 6.6% | 6.5% | 14.0% | 7.4% | 6.0% |
| | | | | | | |
| **Տոկոսակիր պարտավորություններ** | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 8.2% | - | – | 19.1% | 8.9% | – |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ | 10.4% | – | – | 22.1% | – | – |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | | | | |
| - Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ | 2.0% | 1.5% | 0.5% | 4.3% | 2.3% | 0.4% |
| - Ժամկետային ավանդներ | 12.9% | 5.6% | 2.6% | 11.9% | 6.1% | 3.0% |
| Այլ ներգրաված միջոցներ | 9.0% | 6.2% | - | 8.9% | 6.4% | – |
| Ստորադաս փոխառություն մայր ընկերությունից | - | 9.4% | - | - | - | - |

*Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն*

Տոկոսադրույքի ճեղքվածքների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով:
Ստորև ներկայացվում է շուկայական տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 218 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2015թ. սեպտեմբերի 30-ի ու 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| 218 բկ զուգահեռ նվազում | 204,329 | 138,169 |
| 218 բկ զուգահեռ աճ | (204,329) | (138,169) |

Ստորև ներկայացվում է զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը՝ պայմանավորված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությամբ, որն իրականացվել է 2015թ. սեպտեմբերի 30-ի ու 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների եվ պարտավորությունների դիրքերի եվ 218 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

| | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | | *Դեկտեմբերի 31, 2014թ.* | |
|---|---|---|---|---|
| *(հազար ՀՀ դրամ)* | *Զուտ շահույթ* | *Կապիտալ* | *Զուտ շահույթ* | *Կապիտալ* |
| 218 բկ զուգահեռ նվազում | – | 123,992 | – | 104,597 |
| 218 բկ զուգահեռ աճ | – | (123,992) | – | (104,597) |

*(ii) Արտարժույթի ռիսկ*

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժույթի ռիսկն արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական հոսքերի տատանման ռիսկն է: Բանկը չի հեջավորում իր արտարժույթի ռիսկը: Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2015թ. սեպտեմբերի 30-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *(հազ.դրամ)* | *ՀՀ դրամ* | *ԱՄՆ դոլար* | *Եվրո* | *Այլ արտարժույթ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 5,388,212 | 5,634,546 | 718,714 | 18,220 | 11,759,692 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 2,634,739 | 1,388,256 | – | – | 4,022,995 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 65,000 | 4,375,677 | – | – | 4,440,677 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 6,091,254 | 13,566,011 | 237,670 | – | 19,894,935 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 3,159 | 10,727 | 97 | – | 13,983 |
| **Ընդամենը** | **14,182,364** | **24,975,217** | **956,481** | **18,220** | **40,132,282** |
| **Պարտավորություններ** | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 636,667 | 4 | – | – | 636,671 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ | 1,400,399 | – | – | – | 1,400,399 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 4,903,495 | 23,871,646 | 887,897 | 6,868 | 29,669,906 |
| Այլ ներգրաված միջոցներ | 1,038,634 | 1,278,737 | – | – | 2,317,371 |
| Ստորադաս փոխառություն մայր ընկերությունից | – | 2,370,585 | – | – | 2,370,585 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 82,504 | 3,361 | 176 | 6,274 | 92,315 |
| **Ընդամենը** | **8,061,699** | **27,524,333** | **888,073** | **13,142** | **36,487,247** |
| **Զուտ դիրքը** | **6,120,665** | **(2,549,116)** | **68,408** | **5,078** | **3,645,035** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *(հազ.դրամ)* | *ՀՀ դրամ* | *ԱՄՆ դոլար* | *Եվրո* | *Այլ արտարժույթ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 501,776 | 2,917,582 | 817,810 | 7,005 | 4,244,173 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 3,181,783 | – | – | – | 3,181,783 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 6,599,148 | 9,334,859 | – | – | 15,934,007 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 6,613,604 | 21,605,460 | 215,569 | – | 28,434,633 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 2,005 | 8,434 | 11 | – | 10,450 |
| **Ընդամենը** | **16,898,316** | **33,866,335** | **1,033,390** | **7,005** | **51,805,046** |
| **Պարտավորություններ** | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 1,226,598 | 3,912,614 | – | – | 5,139,212 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ | 3,057,139 | – | – | – | 3,057,139 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 4,599,241 | 28,277,242 | 959,852 | 1,253 | 33,837,588 |
| Այլ ներգրաված միջոցներ | 934,991 | 2,413,542 | – | – | 3,348,533 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 93,145 | 1,502 | 669 | – | 95,316 |
| **Ընդամենը** | **9,911,114** | **34,604,900** | **960,521** | **1,253** | **45,477,788** |
| **Զուտ դիրքը** | **6,987,202** | **(738,565)** | **72,869** | **5,752** | **6,327,258** |
| **Ածանցյալ գործիքների ազդեցությունը** | **(141,609)** | **142,491** | **–** | **–** | **882** |

| *(հազ.դրամ)* | *ՀՀ դրամ* | *ԱՄՆ դոլար* | *Եվրո* | *Այլ արտարժույթ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|
| **Զուտ դիրքը՝ ներառյալ ածանցյալ գործիքներ** | 6,845,593 | (596,074) | 72,869 | 5,752 | 6,328,140 |

2015թ. սեպտեմբերի 30-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Բանկը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները կմնան անփոփոխ:

| *(հազ.դրամ)* | *Սեպտեմբերի 30 2015թ.* | *Դեկտեմբերի 31 2014թ.* |
|---|---|---|
| ԱՄՆ դոլարի փոխարժեքի 19.1% արժեվորում դրամի նկատմամբ | (486,881) | (113,850) |
| Եվրոյի փոխարժեքի 20.71% արժեվորում դրամի նկատմամբ | 14,167 | 15,091 |

2015թ. սեպտեմբերի 30-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

## (գ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը կառավարելու համար (ինչպես ճանաչված ֆինանսական ակտիվների, այնպես էլ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար):

Կորպորատիվ վարկերի դիմումները պատրաստվում և վերլուծվում են Կորպորատիվ բանկային ծառայությունների վարչության համապատասխան աշխատակիցների կողմից: Կորպորատիվ բանկային ծառայությունների վարչությունը պատասխանատու է Բանկի կորպորատիվ վարկերի պորտֆելի համար: Այս վարչության վարկային վերլուծաբանների կողմից պատրաստված հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և գործունեության ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման վարչության կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով դրանց համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Կառավարման հանձնաժողովն ուսումնասիրում է վարկի դիմումը Կորպորատիվ բանկային ծառայությունների վարչության կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Կառավարման հանձնաժողովի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Իրավաբանական բաժնի կողմից՝ կախված ռիսկերի առանձնահատկություններից:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Գրավի ընթացիկ շուկայական արժեքը կանոնավոր կերպով գնահատվում է անկախ գնահատողի կամ Բանկի մասնագետների կողմից:

Սպառողական վարկերի դիմումներն ուսումնասիրվում են Սպառողական վարկերի հաստատման բաժնի, Սպառողական վարկերի հաստատման կոմիտեի և Տնօրինության կողմից՝ ելնելով վավերացված սահմանաչափերից:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից՝ ողջ վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման բաժնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Բանկի վարկային ռիսկի առավելագույն չափը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է վարկային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 11,759,692 | 4,244,173 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 4,022,995 | 3,181,783 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 4,440,677 | 15,934,007 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 19,894,935 | 28,434,633 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 13,983 | 10,450 |
| **Վարկային ռիսկի ընդհանուր առավելագույն չափը** | **40,132,282** | **51,805,046** |

Սովորաբար գրավ չի պահանջվում արժեթղթերում կատարած ներդրումների և բանկերին տրված վարկերի դիմաց, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման գործառնությունների մաս:

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և վերջիններիս գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 15-ում:

Չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների հետ կապված վարկային ռիսկին ենթակա լինելու առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 26-ում:

**Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ ֆինանսական գործիքները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, թե ոչ:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ հաշվանցման պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխառության գլխավոր պայմանագրերը: Այնպիսի ֆինանսական գործիքներ, ինչպիսիք են վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և տրամադրում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրերի գծով:

Նման գրավի համար գործում են շուկայում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի գործողության ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն գործարքի ավարտին: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի՝ գրավ տրամադրելու անկարողության պատճառով:

Վերը նշված պայմանավորվածությունները չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմաններին: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտականությունների չկատարման, անվճարունակ դառնալու կամ սնանկացման դեպքում: Բացի այդ, Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը չունեն հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

*(հազար ՀՀ դրամ)*

| *Ֆինանսական պարտավորությունների տեսակներ* | *Ճանաչված ֆինանսական պարտավորության համախառն գումար* | *Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված ճանաչված ֆինանսական պարտավորության համախառն գումար* | *Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական պարտավորություն-ների զուտ գումար* | *Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ Ֆինանսական գործիքներ* | *Զուտ գումար* |
|---|---|---|---|---|---|
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 1,400,399 | – | 1,400,399 | (1,400,399) | – |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **1,400,399** | **–** | **1,400,399** | **(1,400,399)** | **–** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող իրավաբանորեն ամրագրված ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք ենթակա են հաշվանցման:

*(հազար ՀՀ դրամ)*

| *Ֆինանսական պարտավորությունների տեսակներ* | *Ճանաչված ֆինանսական պարտավո-րության համախառն գումար* | *Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված ճանաչված ֆինանսական պարտավորության համախառն գումար* | *Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական պարտավորություն-ների զուտ գումար* | *Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ Ֆինանսական գործիքներ* | *Զուտ գումար* |
|---|---|---|---|---|---|
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 3,057,139 | – | 3,057,139 | (3,057,139) | – |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **3,057,139** | **–** | **3,057,139** | **(3,057,139)** | **–** |

## (դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունն իրացվելիության կառավարման էական գործոն են: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը բնորոշ չէ ֆինանսական կազմակերպություններին՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթ լինելով և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ԱՊԿՀ-ի կողմից:
Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական հաճախորդ իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց վարկերը, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար:

Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այդ հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի վարում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատության ծրագրերի ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Գանձապետարանը բաժիններից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրային նպատակներով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:
Գանձապետարանը վերահսկում է իրացվելիության դիրքը օրական կտրվածքով և իրականացնում է կանոնավոր «սթրես-թեսթեր» իրացվելիության գծով՝ շուկայի սովորական և ավելի խիստ պայմանների ենթադրության կիրառմամբ: Սովորական շուկայական պայմաններում Բանկի իրացվելիության դիրքի վերաբերյալ տեղեկատվություն ներառող հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Բանկի իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿՀ-ն՝ Ռիսկերի կառավարման բաժնի և Գանձապետարանի կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և վարկային պարտավորվածությունների գծով դրամական միջոցների չզեղչված հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված ընդհանուր համախառն արտահոսքն իրենցից ներկայացնում է դրամական միջոցների չզեղչված հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ վարկային պարտավորվածությունների գծով: Ֆինանսական երաշխիքների պայմանագրերի համար երաշխիքի առավելագույն գումարը տեղաբաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանում, որի ընթացքում կարող է պահանջվել երաշխիքով ապահովված պարտավորության կատարում:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնության վերլուծությունը 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Ցպահանջ և մինչև 1 ամիս* | *1- ից 3 ամիս* | *3- ից 6 ամիս* | *6- ից 12 ամիս* | *Ավելի քան 1 տարի* | *Արտահոսքի ընդհանուր համախառն գումար* | *Հաշվեկշռա-յին արժեք* |
|---|---|---|---|---|---|---|---|
| **30 սեպտեմբերի 2015թ.** | | | | | | | |
| Ոչ ածանցյալ պարտավորություններ | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 531 | 29,751 | 20,193 | 26,061 | 759,032 | 835,568 | 636,671 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 1,403,194 | – | – | – | – | 1,403,194 | 1,400,399 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 8,777,543 | 5,514,769 | 6,976,302 | 7,830,622 | 1,363,632 | 30,462,868 | 29,669,906 |
| Այլ ներգրավված միջոցներ | 1,286,863 | 18,518 | 18,225 | 45,348 | 1,338,691 | 2,707,645 | 2,317,371 |
| Ստորադաս փոխառություն մայր ընկերությունից | – | – | 2,450 | – | 4,492,321 | 4,494,771 | 2,370,585 |
| Այլ ֆինանսական պարտավորություն-ներ | 83,315 | – | 9,000 | – | – | 92,315 | 92,315 |
| **Ընդամենը** | **11,551,446** | **5,563,038** | **7,026,170** | **7,902,031** | **7,953,676** | **39,996,361** | **36,487,247** |
| **Վարկային պարտավորվածութ-յուններ** | **561,341** | **–** | **–** | **–** | **–** | **561,341** | **561,341** |

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնության վերլուծությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Ցպահանջ և մինչև 1 ամիս* | *1- ից 3 ամիս* | *3- ից 6 ամիս* | *6- ից 12 ամիս* | *Ավելի քան 1 տարի* | *Արտահոսքի ընդհանուր համախառն գումար* | *Հաշվեկշռա-յին արժեք* |
|---|---|---|---|---|---|---|---|
| **31 դեկտեմբերի 2014թ.** | | | | | | | |
| Ոչ ածանցյալ պարտավորություններ | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 881,738 | 827,030 | 15,319 | 3,306,575 | 389,141 | 5,419,803 | 5,139,212 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 3,077,219 | – | – | – | – | 3,077,219 | 3,057,139 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 6,292,641 | 5,796,691 | 5,040,906 | 10,146,394 | 7,987,885 | 35,264,517 | 33,837,588 |
| Այլ ներգրավված միջոցներ | 2,418,184 | 15,554 | 14,497 | 37,028 | 1,230,047 | 3,715,310 | 3,348,533 |
| Այլ ֆինանսական պարտավորություն-ներ | 90,370 | 4,946 | – | – | – | 95,316 | 95,316 |
| **Ընդամենը** | **12,760,152** | **6,644,221** | **5,070,722** | **13,489,997** | **9,607,073** | **47,572,165** | **45,477,788** |
| **Վարկային պարտավորվածութ-յուններ** | **797,782** | **–** | **–** | **–** | **–** | **797,782** | **797,782** |

ՀՀ օրենսդրության համաձայն ֆիզիկական անձինք կարող են ցանկացած պահի ելքագրել իրենց ժամկետային ավանդները՝ դեպքերի մեծամասնությունում կորցնելով հաշվեգրված տոկոսները: Այս ավանդները դասակարգվում են ըստ պայմանագրային մարման ժամկետների: Ստորև ներկայացված են այս ավանդների դասակարգումն ըստ նշված մարման ժամկետների.

| *(հազ.դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով | 3,986,666 | 1,618,707 |
| 1-ից 3 ամիս ժամկետով | 4,040,185 | 3,871,213 |
| 3-ից 12 ամիս ժամկետով | 13,423,914 | 13,696,577 |
| Ավելի քան 1 տարի ժամկետով | 1,232,394 | 4,206,824 |
| | **22,683,159** | **23,393,321** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մինչև մարման ժամկետը մնացած օրերի:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Ցպահանջ և մինչև 1 ամիս* | *1- ից 3 ամիս* | *3- ից 12 ամիս* | *1-ից 5 տարի* | *Ավելի քան 5 տարի* | *Անժամկետ* | *Ժամկետանց* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 11,759,692 | – | – | – | – | – | – | 11,759,692 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 129,423 | 1,277 | 822,288 | 3,056,847 | – | 13,160 | – | 4,022,995 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 3,017 | 1,466,891 | 2,842,057 | – | – | 128,712 | – | 4,440,677 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 441,184 | 840,696 | 2,872,342 | 6,624,137 | 6,187,154 | – | 2,929,422 | 19,894,935 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | – | – | – | – | – | 1,033,785 | – | 1,033,785 |
| Այլ ակտիվներ | 16,240 | 6,852 | 86,674 | 1,457,449 | – | – | – | 1,567,215 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | – | – | – | – | – | 105,517 | – | 105,517 |
| **Ընդամենն ակտիվներ** | **12,349,556** | **2,315,716** | **6,623,361** | **11,138,433** | **6,187,154** | **1,281,174** | **2,929,422** | **42,824,816** |
| | | | | | | | | |
| **Պարտավորություններ** | | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 530 | 29,316 | 44,497 | 562,328 | – | – | – | 636,671 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 1,400,399 | – | – | – | – | – | – | 1,400,399 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 8,766,614 | 5,466,139 | 14,200,010 | 1,237,143 | – | – | – | 29,669,906 |
| Այլ ներգրաված միջոցներ | 1,286,846 | 18,302 | 59,936 | 607,344 | 344,943 | – | – | 2,317,371 |
| Ստորադաս փոխառություն մայր ընկերությունից | – | – | 2,451 | – | 2,368,134 | – | – | 2,370,585 |
| Այլ պարտավորություն-ներ | 132,123 | 34 | 12,958 | 816 | 6,784 | – | – | 152,715 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **11,586,512** | **5,513,791** | **14,319,852** | **2,407,631** | **2,719,861** | **–** | **–** | **36,547,647** |
| | | | | | | | | |
| **Զուտ դիրքը** | **763,044** | **(3,198,075)** | **(7,696,491)** | **8,730,802** | **3,467,293** | **1,281,174** | **2,929,422** | **6,277,169** |

Ելնելով Հայաստանի ընդհանուր տնտեսական միջավայրից՝ հաճախորդների ավանդների միջին ժամկետայնությունը մինչև 1 տարի է, մինչդեռ հաճախորդներին տրված վարկերինը՝ 1 տարուց ավել, ինչը հանգեցնում է իրացվելիության բացասական ճեղքվածքի «մինչև 1 տարի» մարման ժամկետի տիրույթում:

Բացասական ճեղքվածքը 2015թ. սեպտեմբերի 30-ին կազմել է 10,131,522 հազ.դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ին 13,509,929 հազար ՀՀ դրամ)՝ կազմելով ընդհանուր պարտավորությունների 32.2% մարման ժամկետի նույն տիրույթում (31 դեկտեմբերի 2014՝ 36.4%):

Բացասական ճեղքվածքը զգալիորեն մեղմվում է շնորհիվ հիմնական ընթացիկ հաշիվների կայունության և ժամկետային ավանդների վերաներդրման բարձր մակարդակի: Ցպահանջ ավանդների միջին օրական մնացորդը կազմել է 4,647,936 հազար ՀՀ դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ին՝ 4,160,187 հազ.դրամ): 2015թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների ընթացքում միջինում մարման ժամկետը լրացած ժամկետային ավանդների 81.1%-ը վերաներդրվել էր հաճախորդների կողմից (2014թ.՝ 88.1%):

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մինչև մարման ժամկետը մնացած օրերի:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Ցպահանջ և մինչև 1 ամիս* | *1- ից 3 ամիս* | *3- ից 12 ամիս* | *1-ից 5 տարի* | *Ավելի քան 5 տարի* | *Անժամկետ* | *Ժամկետանց* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 4,244,173 | – | – | – | – | – | – | 4,244,173 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | – | 21,723 | 47,825 | 3,099,075 | – | 13,160 | – | 3,181,783 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 970,868 | 5,012,954 | 3,288,038 | – | – | 6,662,147 | – | 15,934,007 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 402,196 | 832,386 | 8,741,492 | 8,737,108 | 6,677,377 | – | 3,044,074 | 28,434,633 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | – | – | – | – | – | 1,031,801 | – | 1,031,801 |
| Այլ ակտիվներ | 12,550 | 10,436 | 49,161 | 335,163 | 53,450 | – | – | 460,760 |
| **Ընդամենն ակտիվներ** | **5,629,787** | **5,877,499** | **12,126,516** | **12,171,346** | **6,730,827** | **7,707,108** | **3,044,074** | **53,287,157** |
| | | | | | | | | |
| **Պարտավորություններ** | | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 875,556 | 811,409 | 3,150,228 | 302,019 | – | – | – | 5,139,212 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 3,057,139 | – | – | – | – | – | – | 3,057,139 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 6,287,969 | 5,738,047 | 14,602,150 | 7,209,422 | – | – | – | 33,837,588 |
| Այլ ներգրավված միջոցներ | 2,418,178 | 15,387 | 48,603 | 511,001 | 355,364 | – | – | 3,348,533 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | – | – | – | – | – | 10,548 | – | 10,548 |
| Այլ պարտավորություն-ներ | 130,173 | 4,980 | 3,912 | 816 | 6,943 | – | – | 146,824 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **12,769,015** | **6,569,823** | **17,804,893** | **8,023,258** | **362,307** | **10,548** | **–** | **45,539,844** |
| **Զուտ դիրքը** | **(7,139,228)** | **(692,324)** | **(5,678,377)** | **4,148,088** | **6,368,520** | **7,696,560** | **3,044,074** | **7,747,313** |

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Բանկի կողմից կիրառվող հիմնական ուղենիշը բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունն է: Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները, նոստրո հաշիվները, ոսկու ստանդարտացված ձուլակտորները, ՀՀ կառավարության ու ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթերը և այն կորպորատիվ պարտքային արժեթղթերը, որոնց համար գործում է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն և որոնց օգտագործումը ոչ մի կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ըստ պահանջի վճարման ենթակա այլ պարտավորությունները:
Ստորև ներկայացված է բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ և տարվա ընթացքում.

| | *Հունվարի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *2014թ.* |
|---|---|---|
| Հաշվետու ամսվա համար | 288.5% | 252.5% |
| Միջինը ժամանակահատվածի համար | 256.4% | 298.3% |
| Առավելագույնը ժամանակահատվածի համար | 308.3% | 367.1% |
| Նվազագույնը ժամանակահատվածի համար | 190.2% | 224.7% |

Վերը ներկայացված հարաբերակցությունը կիրառվում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափերի հետ համապատասխանությունը որոշելու համար (նվազագույնը 60%):

## 25. Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի նկատմամբ պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ ճանաչում է ՀՀ օրենսդրությամբ բանկերի կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է պահուվեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում է 12%: 2015թ. սեպտեմբերի 30-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում է սահմանված մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը 2015թ. սեպտեմբերի 30-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| Կանոնադրական կապիտալ | 8,125,100 | 8,125,100 |
| Էմիսիոն եկամուտ | 257,149 | 257,149 |
| Գլխավոր պահուստ | 51,292 | 51,292 |
| Կուտակված վնաս | (1,634,128) | (1,052,581) |
| Նվազեցումներ | (1,078,451) | (309,315) |
| **Ընդամենը հիմնական կապիտալ** | **5,720,962** | **7,071,645** |
| Լրացուցիչ կապիտալ | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ | (86,744) | 115,892 |
| Ստորադաս փոխառություն մայր ընկերությունից | 2,368,550 | - |
| **Ընդամենը լրացուցիչ կապիտալ** | **2,281,806** | **115,892** |
| **Ընդամենը կապիտալ** | **8,002,768** | **7,187,537** |
| **Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ** | **35,530,232** | **39,708,051** |
| **Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն** | **22.5%** | **18.1%** |
| **Ընդամենը հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն** | **16.1%** | **17.8%** |

Ստորադաս փոխառությունը տրամադրվել է բանկի բաժնետիրոջ կողմից 2015թ. ապրիլի 30-ին, 5 մլն ԱՄՆ դոլար ծավալով, 10 տարի ժամկետով եվ 9.44% տարեկան տոկոսադրույքով: Փոխառությունը համապատասխանում է Կանոնակարգ 2-ի Հավելված 10-ի պահանջներին եվ անվանական արժեքով ներառվում է նորմատիվային լրացուցիչ կապիտալի կազմում:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած ընդունելի գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

## 26. Վարկային պարտավորվածություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Դրանք իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների տրամադրման պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումը երրորդ անձանց նկատմամբ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև մեկ տարի:

Վարկային պարտավորվածությունների, ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրման ժամանակ Բանկը կիրառում է վարկային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք կիրառվում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են վարկային պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված վարկային պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխիքների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կգրանցվի հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* |
|---|---|---|
| **Պայմանագրային գումար** | | |
| Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ | 386,627 | 607,921 |
| Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ | 150,574 | 138,648 |
| Երաշխիքներ և ակրեդիտիվներ | 24,140 | 51,213 |
| | **561,341** | **797,782** |

Վերը ներկայացված ընդհանուր վարկային պարտավորվածությունները պարտադիր չէ, որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը:
2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային պարտավորվածություններից 212,716 հազար ՀՀ դրամ գումարով պարտավորվածությունները (31 դեկտեմբերի 2014թ.՝ 465,580 հազար ՀՀ դրամ) վերաբերում են երկու հաճախորդի (31 դեկտեմբերի 2014թ.՝ չորս հաճախորդի): Սա վկայում է էական վարկային ռիսկի առկայության մասին:

## 27. Պայմանական պարտավորվածություններ

### (ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Բանկն ապահովագրված է մինչև 500,000 հազար ՀՀ դրամի չափով՝ ապահովագրության յուրաքանչյուր տեսակի համար: Ապահովագրությունը ծածկում է Բանկի շենքերի և սարքավորումների, գործունեության ընդհատման և գույքին առնչվող երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունները, որոնք կարող են առաջանալ Բանկի գույքի կամ գործունեության հետ կապված պատահարներից: Բանկն ապահովագրել է նաև դրամարկղերը 90,000 հազար ՀՀ դրամի չափով՝ ֆիզիկական վնասից և գողությունից:

### (բ) Իրավական պարտավորություններ

Ղեկավարությունը տեղյակ չէ Բանկի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

### (գ) Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել էական տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

## 28. Գործարքներ կապակցված կողմերի հետ

### (ա) Վերահսկողություն

Բանկի մայր կազմակերպությունն է «Բիբլոս Բանկ Էս-Էյ-Էլ»-ը, որին պատկանում է Բանկի բաժնետիրական կապիտալի 65%-ը: Մայր կազմակերպությունը ներկայացնում է հանրությանը մատչելի ֆինանսական հաշվետվություններ: Բանկի վերջնական վերահսկող անձը պրն. Ֆրանսուա Բասիլն է:

### (բ) Գործարքներ Խորհրդի և Տնօրինության անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը 2015թ. և 2014թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների համար:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Հունվարի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հունվարի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* |
|---|---|---|
| Կարճաժամկետ հատուցումներ աշխատակիցներին | 285,661 | 250,563 |

Այս գումարները ներառում են Տնօրենների խորհրդի և Կառավարման հանձնաժողովի անդամների դրամային և ոչ դրամային հատուցումները:

Ստորև ներկայացված են 2015թ. սեպտեմբերի 30-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խորհրդի և Տնօրինության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30 2015թ.* | *Միջին տոկոսադրույք, %* | *Դեկտեմբերի 31 2014թ.* | *Միջին տոկոսադրույք, %* |
|---|---|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | |
| Տրված վարկեր (համախառն) | 100,733 | 9.1% | 178,900 | 9.8% |
| Վարկերի արժեզրկման պահուստ | (201) | | (291) | |
| Ստացված ավանդներ | 221,465 | 5.6% | 274,247 | 6.1% |

Կապակցված կողմերին տրված վարկերը ՀՀ դրամով են և ենթակա են մարման 1-ից 15 տարվա ընթացքում՝ կախված վարկի տեսակից: Վարկերն ապահովված են համապատասխան տեսակի գրավով, ինչպես ներկայացված է Ծանոթագրություն 15-ի (գ) կետի (ii) ենթակետում:

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Կառավարման հանձնաժողովի անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները 2015թ. և 2014թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների համար:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Հունվարի 1, 2015թ. Սեպտեմբերի 30, 2015թ.* | *Հունվարի 1, 2014թ. Սեպտեմբերի 30, 2014թ.* |
|---|---|---|
| **Շահույթ կամ վնաս** | | |
| Տոկոսային եկամուտ | 10,791 | 18,648 |
| Տոկոսային ծախս | (11,382) | (13,985) |
| Արժեզրկումից վերականգնում / (կորուստներ) | 90 | (313) |

## (գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերը ներառում են մայր կազմակերպությունը, նրա այլ դուստր կազմակերպությունները և չվերահսկող բաժնետերերին: Ստորև ներկայացված են 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2015թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսների համար շահույթում կամ վնասում արտացոլված գործարքների գումարները:

| | *Մայր կազմակերպություն* | | *Բանկի նկատմամբ նշանակալի ազդեցություն ունեցող կազմակերպություն* | | *Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ* | | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *հազար ՀՀ դրամ* | *Միջին արդյունավետ տոկոսա-դրույք, %* | *հազար ՀՀ դրամ* | *Միջին արդյունավետ տոկոսա-դրույք, %* | *հազար ՀՀ դրամ* | *Միջին արդյունավետ տոկոսա-դրույք, %* | *հազար ՀՀ դրամ* |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | | | | |
| **Ակտիվներ** | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | 127,437 | – | – | – | 81,187 | – | 208,624 |
| - Եվրոյով | 35,577 | – | – | – | 11,364 | – | 46,941 |
| - այլ արտարժույթով | 7,560 | – | – | – | – | – | 7,560 |
| **Պարտավորություններ** | | | | | | | |
| Ստորադաս փոխառություն մայր ընկերությունից | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | 2,370,585 | 9.4% | – | – | – | – | 2,370,585 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | – | – | – | – | 10 | - | 10 |
| Այլ ներգրավված միջոցներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | – | – | – | – | – | | – |
| **Շահույթ կամ վնաս** | | | | | | | |
| Տոկոսային եկամուտ | 75 | – | – | | – | | 75 |
| Տոկոսային ծախս | (218,067) | – | (6,019) | – | (21,614) | – | (245,700) |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 10 | – | – | – | – | | 10 |
| Միջնորդավճարների գծով ծախս | (2,396) | – | – | – | (54) | – | (2,450) |
| Այլ զուտ գործառնական ծախս | – | – | (146) | – | – | - | (146) |
| Մասնագիտական ծառայություններ | (4,641) | – | – | – | – | – | (4,641) |

Ստորև ներկայացված են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2014թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինը ամիսներին շահույթում կամ վնասում արտացոլված գործարքների գումարները:

| | *Մայր կազմակերպություն* | | *Բանկի նկատմամբ նշանակալի ազդեցություն ունեցող կազմակերպություն* | | *Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ* | | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *հազար ՀՀ դրամ* | *Միջին արդյունավետ տոկոսա-դրույք, %* | *հազար ՀՀ դրամ* | *Միջին արդյունավետ տոկոսա-դրույք, %* | *հազար ՀՀ դրամ* | *Միջին արդյունավետ տոկոսա-դրույք, %* | *հազար ՀՀ դրամ* |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | | | | |
| **Ակտիվներ** | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | 73,327 | – | – | – | 61,791 | – | 135,118 |
| - Եվրոյով | 21,244 | – | – | – | 12,466 | – | 33,710 |
| - այլ արտարժույթով | 1,091 | – | – | – | – | – | 1,091 |
| **Պարտավորություններ** | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | 3,912,610 | 8.9% | – | – | – | – | 3,912,610 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | – | – | – | – | 3,130,435 | 6.3% | 3,130,435 |
| Այլ ներգրավված միջոցներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | – | – | 342,965 | 5.7% | – | | 342,965 |
| **Շահույթ կամ վնաս** | | | | | | | |
| Տոկոսային եկամուտ | 42 | – | – | | – | | 42 |
| Տոկոսային ծախս | (137,099) | – | (30,394) | – | (113,190) | – | (280,683) |
| Միջնորդավճարների գծով ծախս | (3,516) | – | – | – | – | – | (3,516) |
| Այլ զուտ գործառնական ծախս | – | – | (146) | – | – | – | (146) |
| Մասնագիտական ծառայություններ | (26,532) | – | – | – | – | – | (26,532) |

Կապակցված կողմերի դրամական միջոցները և դրանց համարժեքները գրավով ապահովված չեն:

## 29. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

### (ա) Հաշվապահական հաշվառման դասակարգում և իրական արժեք

Իրական արժեքի գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց գնահատման ժամանակաշրջանի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

Բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ վաճառքի համար մատչելի չգնանշվող բաժնային արժեթղթերի և ներքևի աղյուսակում բացահայտված ֆինանսական գործիքների, մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին: Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 13-ում՝ 13,160 հազար ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով վաճառքի համար մատչելի չգնանշվող բաժնային արժեթղթերի իրական արժեքը հնարավոր չէ որոշել:

| *(հազար ՀՀ դրամ)* | *Սեպտեմբերի 30, 2015թ.* Իրական արժեք | *Հաշվեկշռային արժեք* | *Չճանաչված վնաս* | *Դեկտեմբերի 31, 2014թ.* Իրական արժեք | *Հաշվեկշռային արժեք* | *Չճանաչված օգուտ/(վնաս)* |
|---|---|---|---|---|---|---|
| Հաճախորդ-ներին տրված վարկեր | 19,440,075 | 19,894,935 | (454,860) | 28,162,411 | 28,434,633 | (272,222) |
| Ընթացիկ հաշիվներ և ավանդներ հաճախորդ-ներից | 29,579,189 | 29,669,906 | (90,717) | 30,824,179 | 33,837,588 | 3,013,409 |

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և դրամական միջոցների զեղչված հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայի դիտարկելի տվյալներ և այլ գնահատման մոդելներ:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելիս ղեկավարությունը առաջնորդվել է հետևյալ ենթադրություններով.

- 8% և 14%-15% զեղչատոկոսները կիրառվում են համապատասխանաբար բանկերին տրված վարկերից և հաճախորդներին տրված վարկերից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար:
- 8%-10% զեղչատոկոսները կիրառվում են պարտավորություններից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար:

## (բ) Իրական արժեքի հիերարխիա

Բանկն օգտագործում է ֆինանսական գործիքների իրական արժեքների բացահայտման և գնահատման մեթոդների հետևյալ հիերարխիկ կառուցվածքը, որն արտացոլում է չափումների կատարման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. ակտիվ շուկաներում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշումներ (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ, որոնք դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտարկելի ելակետային տվյալներ: Այս մակարդակը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված արժեքների վրա:

| *(հազար ՀՀ դրամ)* | *1-ին մակարդակ* | *2-րդ մակարդակ* | *3-րդ մակարդակ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | | | | |
| - Պարտքային գործիքներ | – | 4,009,835 | – | 4,009,835 |
| | **–** | **4,009,835** | **–** | **4,009,835** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված արժեքների վրա:

| *(հազար ՀՀ դրամ)* | ***1-ին մակարդակ*** | ***2-րդ մակարդակ*** | ***3-րդ մակարդակ*** | ***Ընդամենը*** |
|---|---|---|---|---|
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | | | | |
| - Պարտքային գործիքներ | – | 3,168,623 | – | 3,168,623 |
| | **–** | **3,168,623** | **–** | **3,168,623** |

2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ֆինանսական գործիքների իրական արժեքը չի չափվել, սակայն այն գործիքները, որոնց համար իրական արժեքը բացահայտվել է՝ ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: